ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2015

Բովանդակություն

1. Հանրային հեռուստառադիոընկերության համակարգը 3
2. Հանրային հեռուստառադիոընկերության 2014 թվականի գործունեության նպատակներն ու խնդիրները 4
3. «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ 9
4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ 12
5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ 34
6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ 45
7. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ 52
8. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ 58
9. «Մասս մեդիա» կրթական կենտրոն 61

1. Հանրային հեռուստառադիոընկերության համակարգը

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, և որը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում 2001 թվականի հունիսի 7-ին:

Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

Հեռուստատեսային հաղորդումների արտադրության և հեռարձակման գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հանրային հեռուստաընկերություն), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 4-ի N 592 որոշման համաձայն:

Ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հանրային ռադիոընկերություն), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 661 որոշման համաձայն:

Հանրության բոլոր շերտերի հոգևոր և մշակութային պահանջմունքները բավարարող հաղորդումների արտադրության և հեռարձակման գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 216-Ն որոշման համաձայն:

ՀՀ Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Շիրակի հանրային հեռուստառադիո), որը ստեղծվել է ՀՀ կառավարության դեկտեմբերի 29-ի N 1312 որոշման համաձայն:

Հանրային հեռուստառադիոընկերության կողմից հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հասարակության տարբեր շերտերի և ոլորտների ներկայացուցիչների կարծիքի ուսումնասիրության գործում Խորհրդի ծրագրային

քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի N 1401-Ն որոշման համաձայն:

Նշված բաժնետիրական ընկերությունների պետական սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են Խորհրդին:

Հանրային հեռուստառադիոընկերությունը հանդիսանում է Եվրոպական հեռարձակողների միության (European Broadcasting Union- EBU) լիիրավ անդամ: Անդամակցությունը հնարավորություն է ընձեռում Հանրային հեռուստառադիոընկերությանը Հայաստանը ներկայացնել Եվրոպական հեռարձակողների միության կողմից կազմակերպվող մի շարք միջազգային միջոցառումների շրջանակներում (օրինակ՝ «Եվրատեսիլ», «Մանկական եվրատեսիլ» և այլն), ինչպես նաև հեռուստադիտողներին հասանելի դարձնել միջազգային սպորտային և այլ խոշոր միջոցառումները:

2. <u>Հանրային հեռուստառադիոընկերության 2014 թվականի գործունեության նպատակներն ու խնդիրները</u>

2014 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության գործունեության հիմնական նպատակն է եղել հանրային կյանքում իր առանձնահատուկ առաքելության վերահաստատումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտականությունների և լիազորությունների շրջանակներում: Ըստ այդմ, դրվել են հետևյալ **նպատակները.**

- ապահովել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անաչառ, հավաստի, օպերատիվ, համակողմանի, ամբողջական և սպառիչ լուսաբանումը,
- բավարարել հանրության սեռային, տարիքային, սոցիալական, էթնիկական բոլոր խմբերի բարոյական և գեղագիտական պահանջմունքները՝ առաջնորդվելով համամարդկային և ազգային բարձր արժեքների պահպանման և հանրահռչակման սկզբունքով,
- նպաստել հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության, գթասրտության և հանդուրժողականության գաղափարների տարածմանը,

- խթանել հայ ժողովրդի պատմական հիշողության, լեզվի, գրականության, ազգային ինքնության, մշակութային ժառանգության պահպանմանն ու հարատևմանը միտված հանրային ձեռնարկումները՝ ապահովելով դրանց լուսաբանման շարունակական և հարաճուն ընթացքը,
- ապահովել օտարերկրյա ֆիլմերի և հաղորդումների կրկնօրինակման և թարգմանության բարձր որակ՝ հայոց լեզվին վերաբերող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան,
- մշտապես ուշադրության կենտրոնում պահել հանրության համար կարևոր որոշումների քննարկման և ընդունման ընթացքը,
- արմատավորել առողջ ապրելակերպի սկզբունքներն ու բարձրացնել առողջապահական խնդիրներին հանրության իրազեկվածության մակարդակը,
- աջակցել մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը միտված հանրային ձեռնարկումներին՝ երեխաների մեջ ձևավորելով օրինակելի, բարոյական և գեղագիտական արժեքների ընկալման մշակույթ,
- ձևավորել հայկական աշխարհի միասնական տեղեկատվական դաշտ՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացմանը, հայ ներուժի համախմբմանը և արտերկրի հայ գաղթօջախներում հայապահպանությանը,
- ընդլայնել հանրային ալիքների հեռարձակման տարածքը՝ հասանելի լինելով Հայաստանի և Արցախի բոլոր անկյուններում, ինչպես նաև եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Ամերիկայում՝ միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները,
- կերտել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի պատկերաձայնային միասնական ոճ՝ դյուրին դարձնելով այդ կառույցների գործունեության ճանաչելիությունը,
- ապահովել հեռարձակվող հաղորդումների տեխնիկական անհրաժեշտ որակն ու համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
- ընդլայնել համագործակցությունը Եվրոպական հեռարձակողների միության հետ և համագործակցության դաշտն արտասահմանյան այլ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ,
- ապահովել մասնագիտական կադրերի բնականոն և սահուն սերնդափոխությունը և բարելավել աշխատողների սոցիալական վիճակը,

- Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող սոցիալական գովազդի ընտրությունն իրականացնել որդեգրած քաղաքականության համաձայն,
- դուրս գալով վարկանիշային մրցակցությունից և եթերից բացառելով առևտրային հաղորդումները՝ ավելացնել հանրային բնույթի հաղորդումների եթերաժամանակը,
- վերջին 50 տարիների հայաստանյան կարևոր իրադարձություններին վերաբերող արխիվային նյութերի հիման վրա պատրաստել Հայաստանի այդ ժամանակաշրջանի սոցիալական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող հեռուստահաղորդումներ ու փաստագրական ֆիլմեր և ապահովել վերջիններիս հասանելիությունը հասարակության լայն շերտերին՝ եթեր հեռարձակելով և տեղադրելով ինտերնետային կայքէջում:

Նշված նպատակների իրագործման համար Հանրային հեռուստառադիոընկերությունը 2014 թվականին իր գործունեության հիմքում դրել էր հետևյալ հիմնական **խնդիրները.**

- շարունակել Հանրային հեռուստաընկերության տեխնիկական վերազինման փուլային աշխատանքները,
- օգտագործել համակարգչային նորագույն տեխնոլոգիաներ՝ հեռուստատեսային և ռադիո տարբերանշանների, ձայնային ազդականչերի միասնականացումը և տեխնիկական կիրառելիությունն ապահովելու համար,
- ավարտին հասցնել հեռուստաֆիլմերի «Երևան» ստուդիայի հիմնանորոգված մասնաշենքում գործող «Առաջին լրատվական» ծառայության տեխնիկական վերազինման փուլը,
- ապահովել ինտերնետային կապով Հանրային ռադիոընկերության հայերեն և օտար լեզուներով հաղորդումների հեռարձակումը,
- ապահովել Հայաստանի Հանրապետության և Արցախի բոլոր բնակավայրերում Հանրային հեռուստաընկերության հաղորդումների արբանյակային կապով հեռարձակումը,
- բարձրացնել հաղորդումների հեռարձակման որակը,
- ստեղծել համացանցային նոր կայք՝ Հանրային հեռուստաընկերության տեսլականին ու քաղաքականությանը համապատասխան, որը ժամանակակից տեխնիկական լուծումների շնորհիվ Հայաստանի ու սփյուռքի հեռուստադիտողներին հնարավորություն կտա ուղիղ եթերում հետևելու Հանրային հեռուստատեսությամբ

հեռարձակվող հաղորդումներին ու լրատվությանը՝ կայքի այցելուներին հնարավորություն ընձեռելով նաև ցանկացած պահի դիտել արդեն հեռարձակված հաղորդումներն ու փաստագրական ֆիլմերը,

- զարգացնել և ընդլայնել Եվրոպական հեռարձակողների միության, մի շարք եվրոպական, ԱՊՀ և այլ երկրների հեռուստառադիոընկերությունների հետ համագործակցությունը,
- ակտիվորեն մասնակցել «Եվրատեսիլ» երաժշտական մրցույթին՝ ապահովելով նախապատրաստական անհրաժեշտ միջոցառումներ,
- պատրաստել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հրատապ խնդիրներին նվիրված այնպիսի հաղորդումներ, որոնք ապահովում են անմիջական կապը լսարանի հետ, արձագանքում են ոչ միայն հանրության կյանքում առկա հայտնի խնդիրներին, այլև հանպատրաստից բարձրացնում են նոր հարցեր և փնտրում ոչ ստանդարտ լուծումներ,
- ավելացնել այն հաղորդումների քանակը, որոնք վերաբերում են հասարակության խոցելի և անպաշտպան խմբերի՝ ծերերի, ծնողազուրկ երեխաների, հսկողությունից դուրս մնացած դեռահասների, գործազուրկների և հաշմանդամների, խնդիրներին, ինչպես նաև հանրության մեջ նրանց նկատմամբ ձևավորել համարժեք և հանդուրժողական վերաբերմունք,
- բոլոր հաղորդումներում սահմանել կենդանի, բայց կանոնական հայերենի գերակայություն՝ որպես եթերի լեզվական քաղաքականության առանցքային պայման: Իրականացնել ազգային երգի ու երաժշտության հանրահռչակումը՝ շարունակելով համապատասխան հաղորդաշարերի և համերգների հեռարձակումն ու պատրաստելով նորերը, ներկայացնել հայ ժողովրդի պատմության ուսանելի և հաղթական դրվագները, բացահայտել պատմության առեղծվածները, ներկայացնել հայ գրականության լավագույն նմուշները կենդանի և դինամիկ եղանակով՝ երիտասարդական լսարանի առավելագույն ներգրավումն ապահովելու համար,
- շարունակել համալրել Հանրային հեռուստաընկերության ձայնային բազան ֆիլմերի կրկնօրինակման և հնչյունավորման աշխատանքների որակը հնարավորինս լավացնելու համար,
- շարունակել հեռարձակել ՀՀ Ազգային ժողովի, կառավարության, պաշտպանության նախարարության, ոստիկանության գերատեսչական հաղորդումները, զանազան հաղորդումներում պատշաճ առիթներով մեծարել զոհված և ողջ մնացած հերոսներին,

- բարձրացնել առողջապահական բնույթի հաղորդումների արդյունավետությունը՝ դրանք դարձնելով առավել դիպուկ ու կարճ,
- ցուցադրել բարություն և ընկերասիրություն սերմանող մուլտֆիլմեր, երեխաների մեջ արմատավորել սեփական իրավունքների պաշտպանության և հանրային պատասխանատվության զգացումներ, ճանաչելի և սիրելի դարձնել հայրենի բնաշխարհն ու նրա մարդկանց,
- Երևանի պետական համալսարանի հետ համատեղ մշակված կրթական ծրագրի շրջանակներում գործող «Մասս մեդիա» կրթական կենտրոնում շարունակել նեղ մասնագիտացված հեռուստատեսային արհեստավարժ կադրերի պատրաստումը,
- մշակել և կիրառել հանրային կարծիքի ուսումնասիրման նորագույն մեթոդներ՝ ավելի արդյունավետ և նպատակային դարձնելով հաղորդումների հասցեականությունն ու ծրագրման աշխատանքները, պահպանել անհրաժեշտ համամասնություն սոցիալական խմբերի խնդիրների լուսաբանման ոլորտում,
- համագործակցել սոցիալական գովազդ արտադրող և պատվիրող կառույցների հետ՝ ապահովելու համար դրանց համապատասխանությունը եթերի պահանջներին:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «ՀՀ 2014թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և առևտրային գործունեությունից ստացված եկամուտները:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են «ՀՀ 2014թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված Հանրային հեռուստառադիոընկերության կողմից իրականացվող ծրագրերը և ընկերությունները, որոնց միջոցով այդ ծրագրերը իրականացվել են:

Աղյուսակ 1

2014 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության կողմից իրականացված ծրագրերը

(հազ. դրամ)

Ծրագրի անվանումը	**Ընկերությունները, որոնց միջոցով իրականացվել են ծրագրերը**	**Հաստատված բյուջե (փոփոխ.-ից հետո)**	**Ֆինանսա-վորում**	**Շեղում (+,-)**
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	«Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ (Խորհրդի և նրա աշխատակազմի պահպանման ծախսեր)	126,620.7	125,144 .2	1,476.5
Հեռուստատեսային ծառայություններ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	2,566,686.1	2,566,686.1	-

Ռադիո ծառայություններ	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ	666,671.7	666,671.7	-
Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ	«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ	27,266.4	27,266.4	-
Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ	«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ	9,399.5	9,399.5	-
Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ	«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	147,849.1	147,849.1	-
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	220,000.0	220,000.0	-
«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ	50,000.0	50,000.0	-
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	121,959.6	121,959.6	-
«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ	2,030.0	2,030.0	-
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	«Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ (աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում)	3,432.0	1,937.7	1,494.3
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	«Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ	2,565.0	2,479.0	86.0
Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ	«Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ (Եվրոպական հեռարձակողների միության անդամակցության վճար)	33,404.3	30,063.4	3,340.9
Ընդամենը		**3,977,884.4**	**3,971,486.7**	**6,397.7**

3. «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ

Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը հանդիսանում է Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, որի ենթակայության տակ գործում են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ):

Խորհուրդը սահմանում է Ընկերությունների հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալներն ու հեռուստառադիոծրագրերի (ալիքների) քանակը, ծրագրային քաղաքականությունը, ֆինանսական միջոցների օգտագործման կարգն ու ուղղությունները, համակարգում է Ընկերությունների ընթացիկ գործունեությունը և լսում գործադիր տնօրենների հաշվետվությունները, ինչպես նաև հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության աշխատողների կարգավիճակը և պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմաններն ու վարձատրման կարգը:

2014 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և նրա աշխատակազմի պահպանումն իրականացվել է «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.01 «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով, որին 2014 թվականի սկզբին նախատեսվել էր հատկացնել 129,185.7 հազ. դրամ:

18.12.2014թ. ՀՀ կառավարության N 1427-Ն որոշման համաձայն՝ 2,565.0 հազ. դրամ գումարի խնայողությունը ուղղվել է համակարգչային տեխնիկայի համալրմանը և արդիականացմանը, ինչպես նաև գրասենյակային և այլ անհրաժեշտ գույքի ու սարքավորումների ձեռքբերմանը:

Արդյունքում, ՀՀ պետական բյուջեից 2014 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և աշխատակազմի պահպանման համար հատկացվել է 126,620.7 հազ. դրամ գումար, որից ծախսվել է 125,144.2 հազ. դրամը (2014 թվականի բյուջեն ըստ առանձին հոդվածների ներկայացված է Աղյուսակ 2-ում), իսկ վարչական սարքավորումների ձեռքբերման համար հատկացվել է 2,565.0 հազ. դրամ գումար, որից ծախսվել է 2,479.0 հազ դրամը:

Աղյուսակ 2

2014 թվականի ՀՀ պետական բյուջեից Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և աշխատակազմի պահպանման ծախսերը՝ ըստ հոդվածների

(հազ. դրամ)

Ծախսային հոդվածի անվանումը	**Հաստատ-ված բյուջե**	**Փոփոխութ-յուններ բյուջեում (+,-)**	**Բյուջեն փոփոխութ-յուններից հետո**	**Ֆինանսա-վորում**	**Շեղում (+,-)**
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	114,979.2	-	114,979.2	114,946.7	32.5
Կապի ծառայություններ	2,948.2	- 1,100.0	1,848.2	1,701.8	146.4
Ապահովագրական ծախսեր	120.0	-	120.0	106.2	13.8
Գույքի և սարքավորումների վարձակալություն	3,588.0	-	3,588.0	3,588.0	-

Գործուղումների և շրջագայության ծախսեր	2,833.2	- 1,729.0	1,104.2	98.0	1,006.2
Համակարգչային ծառայություններ	200.0	-	200.0	-	200.0
Ներկայացուցչական ծախսեր	500.0	-	500.0	499.0	1.0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	800.0	-	800.0	791.7	8.3
Գրասենյակային նյութեր և հագուստ	417.1	173.0	590.1	535.1	55.0
Տրանսպորտային նյութեր	2,764.0	-	2,764.0	2,760.2	3.8
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	-	91.0	91.0	83.3	7.7
Պարտադիր վճարներ	36.0	-	36.0	34.2	1.8
Ընդամենը	**129,185.7**	**- 2,565.0**	**126,620.7**	**125,144.2**	**1,476.5**

Խորհուրդն իր աշխատակազմի միջոցով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով իրեն ամրագրված լիազորությունների շրջանակներում 2014 թվականին, ինչպես և նախորդ տարիներին, շարունակել է համակարգել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և իր ենթակայության տակ գտնվող մյուս ընկերությունների գործունեությունը:

2014 թվականին Խորհրդի կողմից հաստատվել են Ընկերությունների հեռուստառադիոհաղորդումների թեմատիկ ուղղություններն ու ծավալները և հեռուստառադիոծրագրերի (ալիքների) քանակները, Ընկերությունների 2014 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվները:

Հանրային հեռուստառադիոընկերությունը շարունակել է հետևել իր նոր որդեգրած ծրագրային քաղաքականությանը: Մեծացվել է սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային ուղղվածություն ունեցող հաղորդումների քանակը, հայրենական արտադրության գեղարվեստական և փաստավավերագրական բարձրակարգ ֆիլմերի, այդ թվում՝ հայ դասական գրականության նմուշների էկրանավորումների հեռարձակումը: Կինոարտադրության ոլորտում առաջնային տեղ է հատկացվել փոքրածավալ սերիալներին՝ ներկայացնելով հանրությանը հուզող խնդիրներն ու երևույթները:

Աշխատանքներ են տարվել ոլորտի միջազգային կառույցների և արտասահմանյան հեռուստաընկերությունների հետ կապերի և փոխհարաբերությունների ընդլայնման ուղղությամբ:

Մշակվել է Հանրային հեռուստառադիոընկերության 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2014 թվականին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ «Առաջին» և արբանյակային (արբանյակային հեռարձակմամբ) ալիքներով:

2014 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում և սահմանված պահանջներին համապատասխան պատրաստել և հեռարձակել է թեմատիկ տարբեր ուղղություններով հաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարել հանրության տարբեր շերտերի և սոցիալական խմբերի հեռուստատեսային պահանջմունքները և ապահովել տեղեկացված լինելու նրանց սահմանադրական իրավունքը:

Հեռուստահաղորդումների պատրաստում

2014 թվականին Հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2014 թվականի ընթացքում «Առաջին» ալիքի եթերով հեռարձակվել են 8,732 ժամ, իսկ արբանյակային ալիքի եթերով՝ 8,732 ժամ ընդհանուր ծավալներով հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

Աղյուսակ 3

2014 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղություններ	«Առաջին» ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)	Արբանյակային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	593	852
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1,392	2,287
3	Մշակութային	3,014	481
4	Կրթական, մանկապատանեկան	619	839
5	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմական	737	2,093
6	Մարզական	651	349
7	Երաժշտական	684	200
8	Զվարճալի-ժամանցային	642	1,376

9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	400	255
Ընդամենը		**8,732**	**8,732**

Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են նաև Գծապատկեր 1-ում և Գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 1. 2014 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից «Առաջին» ալիքով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները (%)



Գծապատկեր 2. 2014 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից արբանյակային ալիքով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները (%)



<u>Լրատվական, լրատվական–վերլուծական հաղորդումներ</u>

«Առաջին լրատվական»

«Առաջին լրատվական» ծառայության նույնանուն հեռուստահաղորդումն Առաջին ալիքի գլխավոր ամենօրյա լրատվական ծրագիրն է, որը համակողմանիորեն լուսաբանում է օրվա ընթացքում Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող հրատապ և ուշագրավ իրադարձությունները: Բացի «Առաջին լրատվական»-ի երևանյան կենտրոնակայանից, թղթակցային կետեր են գործում ՀՀ մարզերի մեծ մասում, թղթակցություններ են ստացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից, Ջավախքից, Ռուսաստանից, Եվրոպական երկրներից, Միացյալ Նահանգներից:

«Առաջին լրատվական»-ի կիրակնօրյա ծրագիրը յուրաքանչյուր կիրակի 50 րոպեների ընթացքում բազմակողմանիորեն ներկայացնում է շաբաթվա կարևորագույն իրողությունները: Բացառիկ ռեպորտաժները լուսաբանում են լրատվությամբ ողջ խորությամբ չմեկնաբանված կամ դուրս մնացած սուր անկյունները: Թեմաները այն հիմնական իրադարձություններն են, որոնք ամբողջ շաբաթ եղել են Հայաստանի ու աշխարհի ուշադրության կենտրոնում, և այն երևույթները, որոնք այդ օրերին գուցեև բավականաչափ ցցուն չեն եղել, բայց իրենց տարածվածությամբ կամ անլուծելիությամբ հանրության համար հիմնախնդիր են:

«Առաջին սփյուռք»

Այս ամենօրյա լրատվական ծրագիրն ուղղված է հայկական սփյուռքին և ներկայացնում է ոչ միայն Հայաստանի, այլև հայ գաղթօջախների կյանքն ու մարդկանց գործունեությունը՝ ապահովելով համահայկական միասնական տեղեկատվական դաշտ:

«Տեսանկյուն»

Գևորգ Ալթունյանի հեղինակային ամենօրյա վերլուծական ծրագիրն օրվա մեկ հրատապ թեման մեկնաբանում է անսպասելի դիտակետից՝ հրապարակախոսական սուր շեշտադրումները համադրելով թեթև և սրամիտ ոճին:

<u>Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ</u>

«Խորհրդարան»

Այս լրատվական հաղորդաշարը շարժական կայանի օգնությամբ տեսագրում և եթեր է հեռարձակում ՀՀ Ազգային ժողովի քառօրյա նիստերի ընթացքը, որտեղ պատգամավորները և խումբ-խմբակցություններն իրենց հատկացված

ժամանակահատվածում հանդես են գալիս հայտարարություններով, բարձրացնում սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ հարցեր:

«Խորհրդարանական շաբաթ»

Ամեն շաբաթ խորհրդարանի աշխատանքները Հանրային հեռուստաընկերության եթերում լուսաբանում է «Խորհրդարանական շաբաթ» մեկժամյա թողարկումը, որի ընթացքում նաև խորհրդարանական խմբերն ու խմբակցությունները կանոնակարգված ժամանակահատվածում լայն հանրության համար բարձրաձայնում են իրենց տեսանելի խնդիրներն ու առաջարկությունները: Թողարկումը պատրաստում է ԱԺ լրատվական ծառայությունը:

«Հրապարակում»

«Հրապարակում» հաղորդաշարի նպատակն է ամեն շաբաթ Հանրային հեռուստատեսության եթերում հասարակությանը ներկայացնել ՀՀ կառավարության գործունեությունը՝ հնարավորինս ամբողջական, սպառիչ և հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ հաղորդելով անցած շաբաթվա ընթացքում կառավարությունում ընդունված կարևորագույն որոշումների, քննարկումների մասին՝ միաժամանակ ներկայացնելով գործադիր իշխանության տնտեսական քաղաքականությունը, տարբեր ոլորտներում դրա իրականացման ընթացքն ու արդյունքները:

«Զինուժ»

Շաբաթական երկու անգամ Հանրային հեռուստաընկերության եթերում է ՀՀ ՊՆ տեղեկատվության վարչության բանակային կյանքի բազմաբովանդակ լուսաբանմամբ հագեցած «Զինուժ» ծրագիրը, որը ներկայացնում է բանակի շաբաթվա առօրյան, միջազգային ռազմաքաղաքական շփումները. մարտական հերթապահություն, զորամասային կյանք, զորավարժություններ, զինվորական ճակատագրեր, զինվոր-հրամանատար հարաբերություններ, պատմամշակութային նյութեր, ինչպես նաև անդրադարձ բանակի անցած հերոսական ուղուն:

«02»

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության «02» հաղորդաշարի գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքներն ու ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների վրա: «02» հաղորդաշարը նպաստում է հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, ներկայացնում է օպերատիվ

նկարահանումներ դեպքի վայրից, հանցագործությունների բացահայտումներ, օպերատիվ հետախուզական և քննչական միջոցառումների իրական առանցքներ, շաբաթվա քրեական քրոնիկոնը, առանձին հանցատեսակներով թեմատիկ հաղորդումներ, մասնագիտական վերլուծություններ և եզրակացություններ, ինչպես նաև պաշտոնական հանդիպումներ, այցեր, միջոցառումներ և տեսակետներ լուսաբանող ռեպորտաժներ:

«Մարտիկ»

Հաղորդաշարի ընթացքում ներկայացվում է բանակի առօրյան: Ամեն անգամ հաղորդման հերոս է ընտրվում մշակութային-հասարակական հայտնի գործիչ կամ պարզապես որևէ զինվորի ծնող: Նրանք այցելում են զորամաս, զինվորների հետ ճաշում, մասնակցում մարտական և ֆիզիկական պատրաստվածության դասերին, ծանոթանում այն զենքին և զինատեսակին, որին տիրապետում է հաղորդման հերոսը, և զորավարժարանում օգտագործում այն: Շատ հաճախ «Մարտիկ»-ն անակնկալ է մատուցում զինվորների ծնողներին. հաղորդաշարի միջոցով զինվորն այցելում է հայրական օջախ՝ հաճելիորեն զարմացնելով և ուրախացնելով ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին: «Մարտիկ» հեռուստանախագիծը պարբերաբար անդրադառնում է ՀՀ ԶՈՒ և ԼՂՀ ՊԲ զորամասերի, զորամիավորումների, դրանց հրամանատարների անցած փառապանծ ուղուն, Արցախյան հերոսամարտին, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված հերոսներին: Ներկայացվում է զորատեսակների ստեղծման ու կայացման ընթացքը, ինչպես նաև քարոզվում են բանակին նվիրված երգեր, պարեր, ֆիլմեր և արվեստի այլ ստեղծագործություններ:

«Մարդը և մարդիկ»

Հաղորդումը անդրադառնում է հասարակության տարբեր շերտերին հուզող խնդիրներին՝ նպաստ, սոցիալական թոշակ, երիտասարդության աշխատատեղերի հարցեր, մանկապարտեզների խնդիրներ և այն:

«Ճակատագրով՝ կին»

«Ճակատագրով՝ կին» նախագծի հերոսուհիները մշակույթի, գիտության, բիզնեսի, հասարակական, քաղաքական և այլ ոլորտներում հաջողության հասած, հարուստ կենսագրության և վառ անհատականության տեր հայտնի կանայք են: Նրանց հետ մտերմիկ զրույցում հեռուստաշարքի հեղինակ Աննա Ավանեսյանը փորձում է բացահայտել հայտնիների կենսագրության անհայտ էջերը, անծանոթ կողմերը և անսպասելի դրսևորումները:

Ընկերների, հարազատների և գործընկերների պատմությունների, ինչպես նաև հերոսուհիների սեփական վերհուշի, մտահոգությունների և երազանքների, ներկայի և ապագայի սպասումի մասին զրույցներով ամբողջացվում է տվյալ անձի դիմանկարը՝ իր մեջ ամփոփելով հաջողության պատմության, գործունեության, սիրո և ընտանիքի մասին պատմող էջերը:

«Ազատ գոտի»

«Ազատ գոտի» թոք-շոուն ազատ հարթակ է, որտեղ քննարկվում են հասարակական և սոցիալական բոլոր այն հարցերը, որոնք հանրության ուշադրության կենտրոնում են, հրատապ են ու լուծման կարիք ունեն: Տաղավարում հասարակական, քաղաքական գործիչներն ու պետական պաշտոնյաները հարցը դիտարկում են յուրաքանչյուրն իր տեսանկյունից, իսկ լրագրողական հետաքննությունը ցույց է տալիս, թե ո՞րն է իրականությունը, ո՞վ է թերացել, ո՞վ է պատասխանատուն:

Քննարկվող թեման դիտարկվում է նաև միջազգային փորձի տեսանկյունից. տեսաշարով ներկայացվում է, թե տվյալ խնդիրն ինչպես են լուծում զարգացած երկրները, կամ չլուծելու դեպքում ինչ աղետալի հետևանքներ են լինում:

«Առավոտ լուսո»

Այս հաղորդումով է բացվում «Առաջին» ալիքի հեռուստատեսային օրը: Մեկ հաղորդման մեջ առկա են միանգամից մի շարք ժանրեր՝ հարցազրույց, սյուժե, ակնարկ, լրատվություն, ռեպորտաժ: Նպատակն է հեռուստադիտողին հաղորդել օրվա ռիթմը, զուգահեռաբար՝ ներկայացնել կենցաղային օգտակար խորհուրդներ և անցած շաբաթվա կարևոր իրադարձությունների համատեքստում զրույցի հրավիրել մարդկանց, ովքեր անկաշկանդ մթնոլորտում հակիրճ բացատրում են այս կամ այն իրողության հանրային նշանակությունն ու ակնկալվող արդյունքը: Թեմաները բազմազան են՝ արվեստ, շոու-բիզնես, նորաձևություն, սպորտ, առողջապահություն և այլն:

«Հարցազրույց»

Լրագրող Նվեր Մնացականյանի ամենօրյա հարցազրույցների շարքն է քաղաքական դաշտի, գիտության, մշակույթի ու հանրային կյանքի տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ օրվա հրատապ հարցերի վերաբերյալ:

«Առաջին տնտեսական»

Տարադրամի փոխարժեք, բորսային նորություններ, գյուղատնտեսության ձեռքբերումներ ու նորագույն տեխնոլոգիաների կիրառում տնտեսության մեջ:

Հաղորդաշարը ներկայացնում է օրվա ընթացքում տնտեսության ոլորտի իրադարձություններն ինչպես Հայաստանից, այնպես էլ ամբողջ աշխարհից:

«Մի րոպե, մի բան ասեմ»

Սխալ խոսք, անուշադիր վերաբերմունք, վատ սովորություններ՝ այս ամենը և ավելին սրամտորեն նկատում է Նարեկ Դուրյանը: Նկատում ու հեռուստառեպլիկի ձևով դրանց վրա է հրավիրում նաև հեռուստադիտողների ուշադրությունը:

«Մերոնք»

«Մերոնք» հեռուստանախագիծը պատմում է տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցների մասին: Հաղորդման հյուրերն են եղել ֆրանսիացի ճանաչված ռեժիսոր Ռոբեր Գեդիկյանը, աշխարհահռչակ հայազգի նկարիչ Ժանսեմը, ամերիկահայ ռեժիսոր Կարլա Կարապետյանը, քանդակագործ Դավիթ Երևանցին և այլք: «Մերոնք» ծրագիրը ծանոթացնում է հայ հեռուստադիտողին սփյուռքում ապրող մեր հայրենակիցների հետ, որոնք պատմում են իրենց կյանքի, գործունեության և այն երկրի մասին, որտեղ այժմ ապրում են:

«Բարդ երկուշաբթի»

Յուրաքանչյուր երկուշաբթի ներկայացվում են բարդ հարցերն ու դրանց ոչ հեշտ, բայց անհրաժեշտ լուծումները: Անհոգ կիրակիին հաջորդում է «Բարդ երկուշաբթին»՝ մի հաղորդում, որի ուշադրության կենտրոնում մարդն է՝ պարզ քաղաքացին, ով միշտ չէ, որ կարողանում է գտնել իրեն հուզող խնդիրների լուծումը: Լրագրողական յուրահատուկ հարթակ, ուր խոսում, լսում ու ներկայացնում են ամենակարևորը:

«Մասնագիտությունը՝ լրագրող»

Աելիտա Չիլինգարյանի և Սոնա Աբրահամյանի հաղորդաշարը վեր է հանում ոչ միայն հասարակության սուր խնդիրները, այլև առանձին անհատների ունեցած խնդիրները տվյալ հասարակության մեջ: Բարդ սոցիալական հարցերի վերաբերյալ լրագրողական լուրջ ու մանրակրկիտ հետաքննությունները հնարավորություն են տալիս հասկանալ իրականությունն ու խնդրին նայել բազմակողմանի:

«Նվիրյալներ»

Հաղորդաշարը նվիրված է արցախյան գոյամարտին և նրա հերոս մասնակիցներին: Անդրադարձ է արվում մեր հաղթանակը կերտած շատ ու շատ մարդկանց՝ զինվորից մինչև գեներալ: Հեռուստադիտողին ներկայացվում է ոչ միայն ազատամարտիկի, զինվորի ու հրամանատարի կարևոր դերը, այլ նաև պատերազմում բժիշկների, հոգևորականների ու այլոց ունեցած կարևոր ներդրումը: Հաղորդաշարի հերոսներն են այն մարդիկ, ովքեր

չվախեցան կռվել ու մեռնել հանուն հայրենիքի: Կան դրվագներ մարտերից, որոնց մասին հիշում ու պատմում են ականատեսները:

Նկարահանումները կատարվում են Արցախում և Հայաստանում: Հաղթանակի ու հաղթողների մասին երկու տասնամյակ անց պատմում է վավերագրող Ցվետանա Պասկալևան:

«Դեպի Արցախ»

Հաղորդաշարի յուրաքանչյուր թողարկումը ներկայացնում է այսօրվա հյուրընկալ Արցախի կյանքի որևէ ոլորտ և բացահայտում դրա ամենահետաքրքիր մանրամասները: Ինչո՞վ է հայտնի Արցախը, ու ի՞նչն է առ այսօր մնում ստվերում, ինչո՞վ է ապրում այսօրվա երիտասարդությունը, և ի՞նչն է մտահոգում ավագ սերնդին: Արցախի լեգենդներն ու իրական պատմությունները ներկայացվում են ականատեսների աչքերով:

«Ագրոժամ»

Հաղորդաշարը նպատակ ունի վեր հանելու գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրները, հասանելի դարձնելու ագրարային քաղաքականությունը հանրությանը, օգնելու գյուղացիական տնտեսություններին աշխատանքները կազմակերպելու հարցում: Սա պետական լիազոր մարմնին հարց ուղղելու նոր հարթակ է ֆերմերների համար, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվություն և աջակցություն ստանալու նոր հնարավորություն: Հաղորդաշարը պատրաստվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ:

«Չակերտներ»

Չակերտներ, որոնք դեռևս չեն բացվել, հարցեր, որոնք դեռ չեն ստացել պատասխաններ. Արթուր Բախտամյանի հեղինակային հաղորդումը կբացի բոլոր չակերտներն ու կստանա պատասխաններ՝ բացահայտելով հյուրին նաև այն կողմերից, որոնք մինչ այդ փակ էին:

Ի՞նչ են նախընտրում կարդալ և դիտել, ի՞նչ վախեր ունեն և ի՞նչ չիրականացված ցանկություններ, ու ի՞նչ է այսօր պակասում Հայաստանին: Այս և շատ այլ հարցեր կգտնեն իրենց հասցեատերերին և դուրս կգան չակերտներից:

«Ջավախք՝ լեռնեցիների օրրան»

Հաղորդաշարը նպատակ ունի աշխարհասփյուռ հայերին ներկայացնել մի դրախտավայր, որի անունն է Ջավախք: Շառլ Ազնավուր, կարդինալ Աղաջանյան, Լուսինե Զաքարյան, Վահան Տերյան, Ջիվանի, Հովհաննես Քաջազնունի, Վարդգես Սուրենյանց,

Կոջոյան. նրանք մեծանուն ջավախցիների մի փոքր մասն են միայն: Հաղորդաշարը կպատմի նրանց մասին, ովքեր ապրել ու արարել են ի նպաստ հայ ազգի: Վաղ միջնադարի բերդեր ու անառիկ պարիսպներ, Ախալքալաք բերդաքաղաք, բյուր սրբավայրեր, չքնաղ անտառներ և մոգական աղբյուրներ, ու իհարկե՝ դրախտային Փարվանա լիճը: Այս ամենը և ավելին կներկայացվեն հաղորդաշարի թողարկումների ընթացքում: Նկարահանումներն իրականացվում են աշխարհի բոլոր այն մասերում, ուր տանում են ջավախցիների հետքերը:

<u>Զվարճալի, ժամանցային հաղորդումներ</u>

«Համեղ մենամարտ»

Ամենահամեղ հեռուստածրագրի նպատակն է բացահայտել թե՛ ազգային, թե՛ աշխարհի ժողովուրդների խոհանոցի առանձնահատկությունները: Երգիչ ու երգչուհի, բժիշկ ու արվեստագետ, պաշտոնյա ու արհեստավոր վառվող գազօջախի մոտ ջերմ, մտերմիկ զրույցներով հեռուստադիտողին են ներկայացնում ընտանեկան խոհանոցի գաղտնիքները, նորանոր բաղադրատոմսեր ու իրենց խոհերը:

«Արի ու տես»

Հաղորդումը նպատակ ունի ներկայացնելու հեռուստադիտողին այն ամենը, ինչ դուրս է մնում յուրաքանչյուր հեռուստանախագծի եթերային տարբերակից: Ներկայացնում ենք շաբաթվա ընթացքում եթեր հեռարձակված հաղորդումների ստեղծման գործընթացն ու ետնաբեմը՝ համեմված մասնակիցների ու հյուրերի յուրատեսակ մեկնաբանությամբ:

«Արի ու տես»-ը խորհրդանշական է այն առումով, որ մեր ծրագրի ընթացքում ցուցադրված նյութերը չեք տեսնի ոչ մի այլ նախագծի շրջանակներում:

Չենք մոռանում անդրադառնալ նաև մեր քաղաքում տեղի ունեցող հետաքրքիր ու կարևոր իրադարձություններին, իհարկե՝ «Արի ու տես»-ի մոտեցմամբ:

«Մեր մեջ ասած»

Հեռուստանախագիծը վարում են երեք հայտնի կանայք՝ հաղորդավար և պրոդյուսեր Արևիկ Ուդումյանը, դրամատուրգ Կարինե Խոդիկյանը և դերասանուհի Իրինա Դանիելյանը:

Տաղավարում նրանք հյուրընկալում են հանրությանը հայտնի կամ անհայտ որևէ մարդու, ով ներկայացնում է իր կյանքի ամենահետաքրքիր ու շրջադարձային դրվագներից մեկը: Անգամ ճանաչված մարդիկ ներկայանում են նորովի՝ պատմելով այն, ինչի մասին դեռ ոչ մի տեղ չի խոսվել: Տաղավարում հյուրերը միշտ անկեղծ են և անմիջական:

Ժամանակ առ ժամանակ տաղավար են հրավիրվում նաև մասնագետներ, ովքեր օգնում են հասկանալ այս կամ այն դեպքի պատճառը՝ տալով որոշակի պարզաբանումներ: Զրույցներն ընթանում են ջերմ և հաճելի մթնոլորտում:

<u>Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմական հաղորդումներ</u>

«Հայաստանի ճամփեքով»

Մեր ստեղծագործական խումբը, շրջելով Հայաստանի ողջ տարածքով, պատմում է քաղաքների, գյուղերի պատմաճարտարապետական հուշարձանների, ինչպես նաև մարդկային ինքնատիպ ճակատագրերի մասին: Հաղորդումը հետապնդում է ճանաչողական նպատակ՝ Հայաստանը հեռուստադիտողին ներկայացնելու հնարավորինս մանրամասն:

«Օտար, ամայի ճամփեքի վրա»

Ծրագիրը պատմում է տարբեր երկրների ու քաղաքների մասին, որտեղ ապրում են մեր հայրենակիցները՝ չմոռանալով նաև տվյալ երկրների տեսարժան վայրերն ու մշակութային արժեքները: Բացառիկ նկարահանումներ են կատարվել տարբեր երկրների թանգարաններում, տաճարներում, պալատներում և համալիրներում: Հաղորդումը արդեն պատմել է տասնյակ երկրների և հարյուրավոր քաղաքների մասին:

Այսօր հաղորդումը հայկական սփյուռքի մասին պատմող այն քիչ շարքերից մեկն է, որ ունի մեծ լսարան ինչպես արտասահմանում, այնպես էլ Հայաստանում: Ծրագիրը հնարավորություն ունեն դիտելու 130-ից ավելի երկրներում, որոնցից շատերում կան մեծ հայկական համայնքներ:

«Հանրալսարան»

Սա ուսուցողական հաղորդաշար է, որում ներգրավված են հայրենական և արտասահմանյան գիտական աշխարհի անվանի ներկայացուցիչները: Նախագծի նպատակն է բարձրացնել հետաքրքրությունը գիտության և կրթության նկատմամբ: Այն հիանալի հնարավորություն է բազմահազար հեռուստադիտողների համար՝ դառնալու գիտության տարբեր ասպարեզները ներկայացնող ճանաչված գիտնականների հեռուստատեսային դասախոսությունների ունկնդիրը: Յուրաքանչյուր հաղորդման ավարտին դասախոսը պատասխանում է լսարանի հարցերին և ամփոփում թեման: Դասընթացները հեռուստադիտողին կօգնեն գտնել հետաքրքրող շատ ու շատ հարցերի պատասխանները, զարգացնել մտածողությունը, ձեռք բերել գիտելիքներ:

«Ամբողջի մի մասը»

Հաղորդաշարը բաղկացած է 12 հաղորդումներից, որոնցում ներկայացվում են ՀՀ տարածքում ապրող ազգային փոքրամասնությունները: Հաղորդումներից յուրաքանչյուրը նվիրված է Հայաստանում հիմնավորված որևէ ազգի մշակույթին, ավանդույթներին, լեզվական նրբություններին, ՀՀ տարածքում հիմնվելու պատմությանը, ինչպես նաև ներկայացվում է տվյալ ժողովրդի հայրենիքի պատմական անցյալն ու ներկան: Յուրաքանչյուր հաղորդման մեջ հաղորդավարն այցելում է ազգային փոքրամասնության տվյալ համայնք և ծանոթանում նրանց խնդիրներին կամ հեռուստադիտողի համար բացահայտում այդ ազգի յուրահատկությունները: Հաղորդաշարի նպատակն է ավելի մոտիկից ճանաչել ՀՀ-ում ապրող ազգային փոքրամասնություններին:

«Հայաստանի առեղծվածները»

Ինչպես բոլոր հին քաղաքակրթական բնօրրաններում, այնպես էլ Հայաստանում առասպելի և իրականության սահմանները հաճախ հատվում են, և դժվար է լինում զատել ճշմարտությունը հորինվածքից: Ահա այդպիսի առեղծվածային խնդիրների բացահայտմանն է նվիրված Ստեփան Զաքարյանի հեղինակային հաղորդումը:

Բոլոր վիճահարույց խնդիրները հաղորդման ընթացքում վեր են հանվում բացառապես գիտության փաստարկված լեզվով. նոր, թարմ վարկածներն առաջ են քաշում միայն մասնագետները, ինչը պատշաճ է «Առաջին» ալիքի ոգուն և առաքելությանը:

«Անբացատրելին»

Հանրության մեջ ժամանակ առ ժամանակ մեջտեղ են գալիս բնության և հասարակության մեջ նկատվող այսպես կոչված «պարականոն» երևույթների մասին սիրողական քննարկումներ, որոնք խճճում են հարցը՝ մեզ ավելի հեռացնելով ճշմարտությունից: «Անբացատրելին» գիտահանրամատչելի հաղորդաշարի նպատակը այս խնդրում պարզություն մտցնելն է և անլուծելի թվացող երևույթների համարժեք ընկալման ձևավորումը: Մասնագետները փորձագիտական մակարդակով անդրադառնում են քննարկվող հարցերին տարբեր տեսանկյուններից. հաճախ նաև հայտնվում են իրարամերժ կարծիքներ:

Մշակութային հաղորդումներ

«Արվեստանոց»

Անկաշկանդ ու մտերմիկ մթնոլորտ, անկեղծ զրույց, որն ավելի շուտ հիշեցնում է ստեղծագործական, քան ուսուցողական պրոցես. վարպետության դաս է վարում ճանաչված ու սիրված արվեստագետներից մեկը… Սա «Արվեստանոց» հաղորդաշարն է, որի յուրաքանչյուր հաղորդում սկսվում է այն վարելու համար հրավիրված Վարպետի բլից հարցազրույցով: Երիտասարդական լսարանի առջև ներկայացնելով իրենց մտքերն ու փորձը՝ փոքրիկ գաղտնիքներ են բացահայտում մշակույթի տարբեր ասպարեզներում հաջողության հասած արվեստագետներ: Հաղորդման ավարտին նրանք պատասխանում են մասնակիցների հարցերին:

«Արվեստակիրներ»

Այս խորագրի ներքո ստեղծվել է վավերագրական երկու ֆիլմաշար, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 12 ֆիլմից: Կինոնկարները, որ նախատեսված են հանդիսատեսի լայն լսարանի համար, ներկայացնում են մեր ազգային մշակույթում նշանակալի հետք թողած, ճանաչված անհատներին՝ նրանց, ովքեր սիրված են հայրենիքում, և ում համբավը դուրս է եկել Հայաստանի սահմաններից: Ունենալով պատմողական բնույթ՝ կինոնկարները նաև որոշակի ինտրիգ են պարունակում, քանի որ հեղինակների կողմից ներկայացվում է ոչ թե ֆիլմի հերոսի կատարյալ կերպարը, այլ մարդը՝ իր ուժեղ ու թույլ կողմերով, ստեղծագործական փնտրտուքներով ու տարակուսանքներով, ում, անշուշտ, խորթ չեն նաև մոլորությունները:

«Արվեստն արվեստի համար»

Հաղորդաշարը վերաբերում է արվեստի գոյաբանության (օնթոլոգիայի) հարցերին: Այն ներկայացնում է իրականության էսթետիկական ընկալումը՝ որպես անշահ հայեցողություն և որպես հիմք ստեղծագործության համար:

Իրականությունը դիտվում է և ամրակայվում իրենից տարբեր նյութերով և շրջանակներով: Այդ երևույթն անվանում են «իրականության արտացոլում», ասում են նաև «իրականության զուգահեռը», բնորոշում որպես «իրականության շարունակություն»: Մինչդեռ իրականում սա հենց բուն արվեստն է՝ իր ինքնակեցությամբ, այսինքն՝ նպատակն ինքնին հենց իր մեջ է, այլ ոչ թե իրենից դուրս: Սա նշանակում է արվեստն արվեստի համար, ինչպես կյանքը կյանքի համար:

«Հոգևոր հայրենիք»

Ի՞նչ է հայրենիքը, որտե՞ղ փնտրենք հայրենիքը. այս հարցերը հայության ֆիզիկական գոյության մասին չեն, այլ նրա ապագայի, նրա մշակութային ժառանգության, նրա հոգեկան ինքնության մասին, և այն մասին, որ շքեղ շենքերի հայրենիք չդարձնենք մեր հայրենիքը, այլ հոգու մտքի հպարտությամբ ճոխացնենք այն, տենչանք ու աշխատենք հոգևոր Հայաստանի համար: Նյութական կորուստները միշտ կարելի է վերադարձնել, իսկ հոգևոր կորուստն անդառնալի է: Հաղորդաշարի հիմնական թեմաները շոշափում են կարևորագույն հարցեր՝ ի՞նչ սյուների վրա է կառուցված հայրենիքը և ի՞նչ սյուների վրա է շարունակում կառուցվել՝ աշխարհագրական, տնտեսական, պատմական, մշակութային:

«Արտկանոն»

«Արտկանոնը» բաղկացած է մի քանի բաժիններից՝ շաբաթվա մշակութային իրադարձությունների ազդագիր, հանրային հնչեղություն ունեցող մշակութային որևէ թեմայի շուրջ բանավեճ, որը վարում է Արամ Աբրահամյանը, ու, իհարկե, նույն թեմայով սյուժե, ինչպես նաև անդրադարձ շաբաթվա միջազգային կարևոր իրադարձություններին: «Արտկանոնի» հետաքրքիր բաժիններից են «Սկանդալային դեմքը» և ինքնատիպ սոցիարցումը մշակութային իրադարձության, գործչի կամ թեմայի շուրջ: Հարցախույզի նպատակն է պարզել, թե որքանով են տեղեկացված մեր համաքաղաքացիները: Պատասխանները հաճախ բավական անսպասելի են ու տպավորիչ: «Արտկանոնը» մշակութային հաղորդաշար է՝ նոր կանոններով, մշակույթի հանդեպ նոր հայացքով: Տաղավարում հյուրընկալվում են մշակույթի տարբեր ոլորտների (կինո, թատրոն, արվեստ, գրականություն, երաժշտություն) ճանաչված արվեստագետներ:

«Մենք և ժամանակը»

Կինոռեժիսոր, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահ Ռուբեն Գևորգյանցը յուրաքանչյուր ուրբաթ հայ հեռուստադիտողին է ներկայացնում «Մենք և ժամանակը» հեղինակային հաղորդումը՝ փորձելով հետաքրքրություն առաջացնել վավերագրական ուշագրավ ֆիլմերի հանդեպ: Հաղորդումը պատմում է հին ու նոր ֆիլմերի ստեղծման պատմությունները: Գևորգյանցի հյուրերն են հայկական վավերագրական ֆիլմերի ստեղծողները, ժամանակաշրջանի վկաները, ֆիլմում արծարծված խնդիրներին քաջատեղյակ մարդիկ: Հաղորդումը հնարավորություն է տալիս նաև գնալ տարբեր ֆիլմերի ստեղծման հետքերով, այցելել վայրերը, ուր նկարահանվել են այդ կինոնկարները:

Նախագիծն իրականացվում է «Հայկ» կինոստուդիայի հետ համատեղ:

<u>Կրթական, մանկապատանեկան հաղորդումներ</u>

«Հայ ասպետ»

Հեռուստամրցախաղ բառահանդես է, որտեղ վիճակահանությամբ ընտրված 3 դպրոցների 4-7 դասարանների լավագույն աշակերտներից ձևավորված թիմերը մրցում են հայագիտության բոլոր ոլորտներից իրենց գիտելիքներով (պատմություն, լեզու-գրականություն, բնություն և աշխարհագրություն, հայ արվեստի պատմություն, առասպելներ և ավանդություններ, երգ ու պար, վարվեցողության ազգային ավանդույթներ և այլն): Ամսվա առաջին երեք շաբաթների հաղթող թիմերը դառնում են «Հայ ասպետներ» և վերջին շաբաթում մրցում միմյանց հետ՝ այսպիսով ընտրելով տվյալ ամսվա հաղթողին: Յուրաքանչյուր ամսվա հաղթող թիմի հետ կազմակերպվում է հայրենաճանաչողական արշավ Հայաստանի որևէ պատմական վայր, որը նկարահանվում է և որպես հաղորդման հավելված նույնպես ցուցադրվում: Այնուհետև յուրաքանչյուր 3 ամիսների հաղթողները մրցում են իրար հետ. ընտրվում է եռամսյակի հաղթող, իսկ ուսումնական տարվա վերջում երեք եռամսյակների հաղթողները մրցում են իրար հետ և տարվա հաղթող թիմը, բացի հովանավորների պարգևներից ու մրցանակներից, ստանում է գլխավոր մրցանակը՝ 7-օրյա շրջագայություն Արևմտյան Հայաստանում:

«ՀԱՅ-Q հեռուստավիկտորինա»

«Հայ-Q»-ն ինտելեկտուալ խաղի նոր ձևաչափ է, որի միջոցով բացահայտվում են մասնակիցների գիտելիքները, մտքի ճկունությունը, արագ կողմնորոշվելու ունակությունը: Ժամանցային լինելուց բացի, խաղը նաև դիտողի մոտ գիտելիքի հանդեպ ձգտում սերմանելու միջոց է:

Այն ընթանում է 3 փուլով: Ըստ խաղի կանոնների՝ մինչև եզրափակիչ փուլի վերջին վայրկյանները բոլոր թիմերն ունեն հաղթելու հավասար հնարավորություն: Հաղթող թիմն արժանանում է դրամական պարգևի՝ հավաքած միավորների քանակին համապատասխան:

Խաղին կարող է մասնակցել բազմակողմանի գիտելիքներ ունեցող ցանկացած մարդ՝ առանց տարիքային սահմանափակման:

«Հայադարան»

Երկարատև լռությունից հետո հայկական հեռուստաեթերում փորձ է արվում ներկայացնել հայ գրականության մեծերի կյանքն ու ստեղծագործությունը հեռուստահաղորդման ուրույն լեզվով: Բանաստեղծություններն ու արձակի պատառիկները

հնչում են միզանսցենային միջավայրում, ինչը զերծ է պահում անհարկի պաթոսից, ավելին՝ ապահովում լսարանի հետ հաղորդակցման բնական տարբերակը:

«Հայադարանում» պոեզիան երիտասարդ պրոֆեսիոնալ դերասանների մատուցմամբ դառնում է պատմություն և տեսարան՝ դուրս գալով իր նախնական, գրական տեսքից: Հաղորդաշարի հիմքում ընկած են ինչպես պոեզիան, այնպես էլ պատմություններ, հետաքրքիր, չբացահայտված դրվագներ գրողների կյանքից: Հաղորդաշարի նպատակն է հրապուրել հեռուստադիտողին, հատկապես՝ երիտասարդ, և ուղղորդել դեպի պոեզիան ու գիրքը:

«Մայրիկների ակումբ»

Հաղորդաշարն ուրախ, լուսավոր միջավայրում նորատի ու փորձառու մայրիկներին մատչելի լեզվով զինում է օգտակար տեղեկատվությամբ: Օգնում են կողմնորոշվել երեխաների խնամքի ու դաստիարակության հարցերում, ներկայացնում մայրաքաղաքում ու մարզերում գերիշխող սիրողական մոտեցումները: Հաղորդման ընթացքում ներկայացվում են կնոջ հղիության շրջանները, երեխայի կյանքի առաջին տարին և հետագա զարգացումը: Հաղորդաշարն ընդգրկում է նաև տեսանյութեր վերոհիշյալ թեմաներով: Հաղորդաշարի ուշադրության կենտրոնում են նաև նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներն ու նրանց առողջության և դաստիարակության հետ կապված հարցերը: Ստեղծվել է փոքրիկ անկյուն, որտեղ կանայք ամեն անգամ ընտրում են որևէ թեմա և ազատորեն քննարկում այն:

<u>Մարզական հաղորդումներ</u>

«Շախմատ 64»

Շախմատը Հայաստանում հենակետային մարզաձև է: Վերջին տարիներին ամենաիմաստուն խաղի մեր վարպետները հասել են փառահեղ նվաճումների: «Շախմատ 64» հաղորդաշարը համակողմանիորեն լուսաբանում է շախմատի աշխարհում տեղի ունեցած բոլոր միջոցառումները: Մեկնաբանը նախ ներկայացնում է վերջին օրերին կայացած մրցաշարերի արդյունքները և տեղեկություն տալիս մեր մարզիկների մասնակցության մասին, ապա ընտրում է առավել հետաքրքիր պարտիաներից մեկն ու խաղատախտակին ցուցադրում այն: Այդ ընթացքում նա ոչ միայն քայլերը կատարում է ըստ հերթականության, այլև փորձում է վերլուծել պարտիան, գտնել հնարավոր վրիպումները, մատնանշել ուժեղ քայլերն ու նորամուծությունները: Թողարկման ավարտին մեկնաբանը ներկայացնում է շախմատի աշխարհին վերաբերող հումոր, ներկայացնում

զավեշտալի դեպքեր մեծ շախմատիստների կյանքից: «Շախմատ 64» հաղորդաշարը հեռարձակվում է եթերում յուրաքանչյուր կիրակի:

«Շախմատի աշխարհ»

Շախմատի մասին այս հաղորդումը ներկայացնում է շախմատային աշխարհի կարևոր իրադարձությունները, հաղորդաշարի հյուրերի հետ քննարկում Հայաստանում շախմատային կարևոր միջոցառումներն ու շախմատի զարգացման նախադրյալներն ու ուղղությունները, հանրակրթական դպրոցներում շախմատի՝ որպես ուսումնական առարկայի, դասավանդման արդյունավետության և շախմատային աշխարհի լավագույնների մասին պատմող տեսանյութեր ու սյուժեներ:

«Լրացուցիչ ժամանակ»

Հաղորդաշարը ներկայացնում է ֆուտբոլային կյանքը, անցուդարձը, մութ ու խորհրդավոր պատմությունները: Պարբերաբար անդրադառնալով այս կամ այն ֆուտբոլային ակումբին՝ «Լրացուցիչ ժամանակ»-ը փորձում է նպաստել հեռուստադիտող-ֆուտբոլային ակումբ կապի ամրապնդմանը:

Հաղորդաշարը բաղկացած է բացառիկ հարցազրույցներից ու ռեպորտաժներից, միջազգային ֆուտբոլի լայն անդրադարձից: «Լրացուցիչ ժամանակ» հաղորդման ընթացքում լուսաբանվում են շաբաթվա ամենահետաքրքիր դրվագները, գոլերն ու վրիպումները:

«Խաղից դուրս»

Կարեն Գիլոյանի հեղինակային հաղորդումն ամեն շաբաթ ներկայացնում է սպորտային կյանքի նորությունները, հրատապ ու թեժ թեմաները: Հաղորդաշարը փորձում է գտնել, ու ջրի երես հանել այն բոլոր խնդիրները, որոնք առկա են սպորտում: Ուշադրության կենտրոնում են մանկապատանեկան սպորտից մինչև մարզային սպորտ ընկած բոլոր խնդիրները՝ ովքե՞ր են պատասխանատուները, ինչո՞ւ են երեխաները ֆիզիկական կուլտուրայի ժամերին զբոսնում փողոցում և ծխում, ինչո՞ւ զորակոչված մարզիկները չեն կարողանում մասնակցել միջազգային մրցաշարերին: Հաղորդման հյուրերի հետ քննարկում են ոլորտի խնդիրները, դրանց լուծման հավանական տարբերակներն ու արդյունավետ ելքերը:

<u>Երաժշտական հաղորդումներ</u>

«Երգ երգոց»

Հաղորդաշարի թեման հայ երգն է՝ սկսած միջնադարյան տաղերից մինչև 80-ականների վերջի հեղինակային երգը: Առանձին հաղորդումներ են նվիրվում հայ անվանի կոմպոզիտորներին և նրանց ստեղծագործություններին, զանազան հոբելյանական առիթներով հնչում են սիրված երգեր: Հանրապետության շնորհալի երգիչների կատարումներին զուգահեռ, հատուկ պատրաստված ժամանակագրական տեսաֆիլմերով ներկայացվում է տվյալ երգի կամ հեղինակի ժամանակաշրջանի սոցիալական-քաղաքական-տնտեսական համատեքստը՝ հաղորդումը օժտելով նաև ճանաչողական ոչ պակաս կարևոր գործառույթով: Հաղորդման բովանդակային նյութին համապատասխան հրավիրվում են հյուրեր, ովքեր իրենց մեկնաբանություններով և հուշերով ամբողջացնում են տվյալ թեմայի համակողմանի լուսաբանումը:

«Երաժշտական փոստարկղ»

Հաղորդման ստեղծագործական խումբը մեկ առ մեկ ընթերցում է բոլոր նամակ-պատվերները և դրանցից ընտրում լավագույնները, որոնք բարձրացնում են մարդկանց տրամադրությունը: Հաղորդումների ընթացքում մատուցվում են բազմաժանր ու բազմազան երաժշտական ոճեր. դասական, ազգային, ժողովրդական, ազգագրական, հայկական և արտասահմանյան էստրադա, հեղինակային երգ, երաժշտական նորություններ և շատ ու շատ հին ու բարի հիշողություններ արթնացնող ստեղծագործություններ:

«Երևան ջազ»

Համաշխարհային և հայկական ջազ, համաշխարհային ջազի հայազգի դեմքեր… Այս ամենի մասին է «Երևան ջազ» հաղորդաշարը, որը կարելի է համարել թե՛ տեղեկատվական, թե՛ ճանաչողական: Յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ներկայացվում է հայաստանյան ջազային մի խումբ, հնչում են հանրահայտ և լեգենդար ջազային աստղերի կատարումներ «Հայկական ջազի 70 տարիներ» փառատոնի շրջանակներում տեղի ունեցած համերգներից, ներկայացվում են ջազային ժանրի ճանաչված հայազգի ջազմեններ: Սա հաղորդաշար է, որն ամեն անգամ լինելով եթերում՝ ի զորու է հեռուստացույցի մոտ բերել ջազի սիրահարներին և գրավիչ ռիթմերով լի 25 հրաշալի րոպեներ պարգևել նրանց:

Հեռուստահաղորդումների հեռարձակում

2014 թվականին Հանրային հեռուստաընկերության «Առաջին» ալիքի և արբանյակային ալիքի հաղորդումները հեռարձակվել են օրական 24 ժամ:

Հայաստանում և Արցախում հեռարձակումն իրականացվել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, իսկ արբանյակային հեռարձակումը՝ «Գլոբքասթ Ֆրանս» (Globecast France) ընկերության միջոցով: Վերջինիս միջոցով հեռարձակումն ապահովվել է «Հոթբըրդ 13D» (Hotbird 13D) և «Յութելսաթ 36B» (Eutelsat 36B) արբանյակներով, բաց ազդանշանով: Նշված արբանյակների ծածկույթը ներառում է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա, Իրան, Ռուսաստանի հիմնական մասը՝ բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է նաև իր աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում կաբելային կապուղիներով հեռուստաընկերության հաղորդումները վերահեռարձակելու ուղղությամբ: ԱՊՀ երկրներում, հատկապես Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում, ինչպես նաև Վրաստանում, շարունակել են աճել Հանրային հեռուստաընկերության հաղորդումների՝ կաբելային ցանցով հեռարձակման ծավալները:

2014թ. նոյեմբերի 1-ից Հանրային հեռուստաընկերության միջազգային հեռուստաալիքը սկսել է հեռարձակվել նաև ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում և հարակից շրջաններում 18.10 և 20.5 թվային եթերային ալիքներով, ինչը հնարավորություն է տվել այդ շրջաններում բնակվող ավելի քան կես միլիոն հայ բնակչությանը անվճար և դյուրին կերպով դիտելու Հանրային հեռուստաընկերության եթերով հեռարձակվող հաղորդումները: ԱՄՆ-ում հեռուստաալիքը նաև հեռարձակվել է «Վերայզոն» ընկերության ցանցի միջոցով, որը ոլորտի առաջատարներից է, ինչպես նաև մի շարք այլ ինտերնետային լուծումներով մեծ տարածում ունեցող ընկերությունների կողմից:

Ֆրանսիայում կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները հեռարձակվում են ֆրանսիական տարբեր ընկերությունների կողմից, ինչպես օրինակ «Օրանժ» ընկերությունն է:

Հանրային հեռուստաընկերությունը միաժամանակ 2014 թվականի ընթացքում մշակել է ինտերնետային նոր կայք (www.1tv.am), որն իր ժամանակակից տեխնիկական լուծումներով հնարավորություն է տվել եթերը բարձր որակով հեռարձակել իրական

ժամանակում՝ հասանելի դարձնելով հաղորդումների դիտումը աշխարհի բոլոր մասերում բնակվող հայկական համայնքների համար: Ներկայումս եթերին կարելի է հետևել ինչպես համակարգչով, այնպես էլ բջջային հեռախոսներով և պլանշետներով: Կայքը հնարավորություն է տալիս նաև դիտել արդեն հեռարձակված հաղորդումները:

<u>Ֆինանսատնտեսական գործունեություն</u>

Հանրային հեռուստաընկերությունը 2014 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, արբանյակային ալիքի առևտրային և «Առաջին» ալիքի սոցիալական գովազդից, մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ընթացքում հովանավորչությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման, ինչպես նաև տեխնիկական վերազինման և շենք-շինությունների հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է՝

- 08.03.01.02 «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով՝ 2,566,686.1 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),
- 08.03.01.11 ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում» ծրագրով՝ 220,000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),
- 08.03.01.13 ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում» ծրագրով՝ 121,959.6 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

2014 թվականին Հանրային հեռուստաընկերության այլ աղբյուրներից ստացված փաստացի եկամուտները կազմել են 481,644.0 հազ. դրամ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության կողմից 2014 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 4

2014 թվականի Հանրային հեռուստաընկերության եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	Ընթացիկ դրամաշնորհ	2,566,686
2	Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	318,598
3	Առևտրային եկամուտներ, այդ թվում՝	467,336
3.1	*«Առաջին ալիքի» սոցիալական գովազդ, մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հաղորդումների հովանավորչություն, միջազգային ալիքի առևտրային գովազդ*	*336,249*
3.2	*Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք*	*31,715*
3.3	*Հեռարձակման և վերահեռարձակման դիմաց վճար*	*64,660*
3.4	*Այլ*	*34,712*
4	Ոչ գործառնական եկամուտ	14,308
Ընդամենը		**3,366,928**

Աղյուսակ 4-ի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցներով ձեռք բերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2014 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Աղյուսակ 5-ում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության 2014 թվականի գործունեության ընթացքում կատարված փաստացի ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 5

2014 թվականի Հանրային հեռուստաընկերության ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	1,395,176
2	Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսեր	1,161,585
3	Հեռարձակման ծախսեր	642,833
4	Մաշվածք և ամորտիզացիա	393,719
5	Այլ ծախսեր	575,084
Ընդամենը		**4,168,397**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 33.5%-ը և ներառել է հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև մարզային և արտերկրի թղթակիցների վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 27.9%-ը և ներառել են հեռուստահաղորդումների ձեռքբերման, հեռուստահաղորդումների, ֆիլմերի և տարբեր նշանակալից սպորտային ու մշակութային միջոցառումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, ինչպես նաև հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 15.4%-ը և ներառել են ՀՀ տարածքում և արբանյակային կապուղով ՀՀ տարածքում և արտերկրում հեռարձակման, ինչպես նաև ինտերնետային առցանց հեռարձակման ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 13.8%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, արտագերատեսչական պահպանության, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, ներկայացուցչական, աուդիտի, գործուղման ծախսերը, հարկերը և տուրքերը (ներառյալ շահութահարկի գծով փոխհատուցումը), ինչպես նաև այլ ֆինանսական ծախսերը՝ ներառյալ փոխարժեքային վնասը:

Այսպիսով, 2014 թվականին Հանրային հեռուստաընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ վնասը կազմել է 801,469.0 հազ. դրամ: Վնասը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության նախաձեռնությամբ և Հանրային հեռուստաընկերության կողմից ընդունված քաղաքականության արդյունքում 2014 թվականի հունվարից «Առաջին» ալիքի եթերում առևտրային գովազդի հեռարձակման դադարեցմամբ և հեռուստահաղորդումների հեռարձակման ընթացքում հովանավորների մասին տեղեկությունների տեղադրման պահանջների փոփոխությամբ: 2014 թվականին փաստացի տարեկան եկամուտները (բացառությամբ ընթացիկ դրամաշնորհի և ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտների) քիչ են եղել տարեսկզբին նախատեսվածից 599,440.0 հազ. դրամով, իսկ փաստացի դրամական մուտքերը՝ 797,209.0 հազ. դրամով (ներառյալ ԱԱՀ):

Արդյունքում, 2014 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերության գործունեության ապահովման համար անհրաժեշտ վճարումները մասամբ իրականացվել են ներգրավված հավելյալ վարկային միջոցների հաշվին՝ 856,755.0 հազ. դրամ գումարի չափով:

2014 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 557,768.0 հազ. դրամ:

2013 թվականի գործունեության արդյունքներով Հանրային հեռուստաընկերությունը 2014 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարել 6,895.0 հազ. դրամ շահութաբաժին:

2014 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ձեռք է բերել 177,970.0 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ նյութական և ոչ նյութական ակտիվներ, մասնավորապես՝ հեռուստատեսային և համակարգչային տեխնիկա, անվտանգության համակարգի տեսախցիկներ, արտադրական գույք, օդորակիչներ և օդակարգավորիչներ, տրանսպորտային միջոց, անցագրային ռեժիմի ծրագրային համակարգ, հաշվապահական հաշվառման ծրագիր, ինտերնետային կայքի պատրաստման ծառայություններ և այլն:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից տեխնիկական վերազինման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցներից 62,268.7 հազ. դրամը Հանրային հեռուստաընկերությունը ուղղել է 2013 թվականին «Առաջին լրատվական» ծառայության տեխնիկական համալիրի և արտատաղավարային նկարահանումների ապահովման նպատակով թվային (HD) տեխնիկական միջոցների ձեռքբերման ծախսերի փոխհատուցմանը, 31,602.9 հազ. դրամը՝ 2013 թվականին «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված հեռուստատեսային տեխնիկայի մաքսազերծման ծախսերի իրականացմանը, իսկ 28,088.0 հազ.դրամը՝ 2014 թվականին հեռուստատեսային տեխնիկայի ձեռքբերմանը:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցներն ուղղվել են 2013 և 2014թթ. իրականացված «Երևան ստուդիա» մասնաշենքի վերակառուցման (այդ թվում հին կաթսայատան ապամոնտաժման), արհեստանոց պահեստների քանդման, միջտարածքային ճանապարհի կառուցման, «Երևան ստուդիա» մասնաշենքի, ԱՍԲ-1 և ԱՍԲ-7 տաղավարների ու դրանց հարակից տարածքների ջերմամատակարարման, սառնամատակարարման և օդափոխության համակարգերի ներդրման, սեփական կաթսայատան կառուցման, գլխավոր մասնաշենքի ջեռուցման ցանցի վերակառուցման,

տարածքի բարեկարգման, շինությունների ապամոնտաժման և բացօթյա ավտոկանգառի կառուցման կապալային աշխատանքների իրականացմանը, ընդ որում 2013 թվականի կապիտալ ծախսերի փոխհատուցման գումարը կազմել է 170,301.2 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ 2014 թվականի կապիտալ ծախսերը՝ 49,698.8 հազ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման գործընթացը շարունակական բնույթ է կրում և յուրաքանչյուր տարի Հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է իրականացնել տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման աշխատանքներ՝ հաշվի առնելով վերոհիշյալ ուղղություններով նախատեսվող ֆինանսական միջոցներն ու առաջնահերթությունները:

5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

2014 թվականին «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է ռադիոհաղորդումների արտադրության ու հեռարձակման իր առաքելությունը՝ օրական հեռարձակելով հաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր»-ը՝ 24 ժամ, «Երկրորդ ծրագիր»-ը («Իմ ռադիո»)՝ 24 ժամ, արտասահմանի և Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար պատրաստվող օտարալեզու հաղորդումները՝ 3 ժամ 15 րոպե:

Հանրային ռադիոընկերության նպատակը եղել և մնում է հանրության սահմանադրական իրավունքի ապահովումը՝ հնարավորինս ընդգրկուն տեղեկություններ ստանալու քաղաքական, տնտեսական, մշակութային ու այլ կենսական ոլորտների իրադարձությունների և միտումների վերաբերյալ:

Ռադիոհաղորդումների պատրաստում

Հանրային ռադիոընկերությունը ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2014 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերությունը պատրաստել և հեռարձակել է ռադիոհաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

Աղյուսակ 6

2014 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղություններ	Հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	«Առաջին ծրագիր», այդ թվում՝	8,760
1.1	*Լրատվական, լրատվական-վերլուծական*	*1,414*
1.2	*Քաղաքական, տնտեսական, հասարակական*	*502*
1.3	*Մշակութային և պատմական*	*1,246*
1.4	*Երիտասարդական*	*751*
1.5	*Մանկապատանեկան*	*604*
1.6	*Կրթական և հայոց լեզու*	*264*
1.7	*Ժամանցային*	*568*
1.8	*Հոգևոր*	*266*
1.9	*Երաժշտական*	*2,904*
1.10	*Այլ*	*241*
2	«Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո»)	8,760
3	ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի համար պատրաստվող հաղորդումներ, այդ թվում՝	1,726
3.1	*ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում հեռարձակման համար պատրաստվող (8 լեզուներով)*	*1,179*
3.2	*www.armradio.info կայքէջի համար պատրաստվող (5 լեզուներով)*	*547*

Հանրային ռադիոընկերության կողմից «Առաջին ծրագիր»-ով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են նաև Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. 2014 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից «Առաջին ծրագիր»-ով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները (%)



Հանրային ռադիոընկերության խնդիրների իրականացումը պարտադրում է սկզբունքային մոտեցումների կիրառություն եթերի քաղաքականության մեջ, որոնք համահունչ են մեր ազգային ու պետական շահերին և բխում են հանրության ռադիոկայան լինելու հրամայականից: Հանրային ռադիոյի ծրագրային քաղաքականության մեջ 2014 թվականին առանձնահատուկ տեղ են ունեցել հաշմանդամների, տարեցների, ընտանիքի, կանանց, երեխաների, մանկավարժների, զինվորականների, գյուղացիների, արվեստագետների, ուսանողների և սոցիալական այլ խմբերի հիմնահարցերին վերաբերող հաղորդաշարերը: Ուշադրության առարկա են եղել գրեթե բոլոր ոլորտների և բնագավառների իրավական կարգավորմանն առնչվող հարցերը:

Կարևորվել է Հանրային ռադիոյի եթերից հնչող կարծիքների հավասարակշռվածությունը, ներկայացվել են թե՛ իշխանական և թե՛ ընդդիմադիր գործիչների տեսակետները: Պետական և քաղաքական նշանակության որևէ իրադարձություն դուրս չի մնացել Հանրային ռադիոընկերության տեսադաշտից: Ներկայացվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտների առավել ուշագրավ իրադարձությունները, ինչպես նաև ՀՀ կառավարության և Ազգային ժողովի գործունեությունը:

<u>Լրատվական, լրատվական – վերլուծական հաղորդումներ</u>

Լրատվական ծառայության սկզբունքներն են՝ օպերատիվություն, տեղեկատվության անաչառ մատուցում և բազմակարծության ապահովում:

«Ռադիոլուր» լրատվական-վերլուծականը 2014 թվականին եթեր է հեռարձակվել աշխատանքային օրերին՝ առավոտյան ժամը 7-ից մինչև 20-ը, կես ժամը մեկ՝ 5-7 րոպե տևողությամբ, իսկ շաբաթ և կիրակի՝ օրական երեք թողարկում: Հիմնական թողարկումը (15 րոպե տևողությամբ) ամփոփել է օրվա ամբողջ տեղեկատվությունը: Լրահոսը հայերեն, ռուսերեն և անգլերեն տեղադրվել է www.armradio.am կայքէջում, ուր տեղադրվել են նաև գլխավոր թողարկման ձայնագրությունները:

Ռադիոլուրի սպորտային թողարկումներում ներկայացվել են մարզաշխարհի ամենակարևոր և հետաքրքիր իրադարձությունները՝ առաջնային տեղ տալով հայ մարզիկների հաղթանակներին, ինչպես նաև հայկական սպորտին առնչվող իրադարձություններին: Անդրադարձել են նաև հայկական սպորտի խնդիրներին՝ փորձելով լուսաբանմամբ աջակցել հայկական սպորտի զարգացմանը:

2014 թվականին շարունակվել են հեռարձակվել ՀՀ պաշտպանության նախարարության **«Ասպար»** և ոստիկանության **«Ռադիո 02»** գերատեսչական հաղորդումները:

Ռուսալեզու լսարանի համար աշխատել է **«Արմենիա»** լրատվական-վերլուծական հաղորդումը, որը հեռարձակվել է աշխատանքային օրերին 10 րոպե տևողությամբ:

«Երևան»-ն ամենօրյա տեղեկատվական ծրագիր է, որն անդրադառնում է մայրաքաղաքում տեղի ունեցող իրադարձություններին: 2014 թվականին ծրագիրը ներկայացրել է մայրաքաղաքի վարչական շրջաններում կատարված աշխատանքները, արձագանքել բնակիչների դիտողություններին և առաջարկություններին, ներկայացրել մայրաքաղաքում կառավարման հաջողություններն ու բացթողումները: Կատարվել են նաև լրագրողական հետաքննություններ քաղաքային տնտեսության, տրանսպորտի, սանիտարական ծառայությունների, արտաքին լուսավորության, բնակարանային ֆոնդի պահպանության, քաղաքաշինության, ճարտարապետության, վթարային շենքերի ամրացման, փողոցների նորոգման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների արդյունավետության, բնապահպանական խնդիրների վերաբերյալ:

<u>Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ</u>

«Հայ իրազեկում» հաղորդաշարը Հայաստանի ու հայության անվտանգության, գոյավիճակի, զարգացումների վրա ազդող կարևորագույն հանգամանքների և ընդհանուր վերելքի համար անհրաժեշտ նախապայմանների մասին հաղորդաշար է:

«Աշխարհը և հայերը» հաղորդաշարը ընդգրկում է այնպիսի թեմաներ, որոնք նույն օրը կամ մեկ օր առաջ հրապարակվել են արտասահմանյան լրատվամիջոցներում և վերաբերում են Հայաստանին կամ հայերին:

«Հատվող եթեր» հաղորդաշարը հրատապ անդրադարձ է հանրապետության տնտեսական, հասարակական, սոցիալական հարցերին՝ ոլորտի հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ:

«Կամուրջ» Հայաստան-Սփյուռք ծրագիրն առաջնորդվում է «Հայաստանը համայն հայության հայրենիքն է» կարգախոսով: Ամենօրյա հաղորդաշարը Սփյուռքի և հայրենիքի բազմաբնույթ կապերի արծարծման խնդիր ունի: Թեմատիկ կողմնորոշմամբ այս ծրագիրն ընդգրկում է հայության երկու մեծ հատվածների գործնական կապերի ողջ ներկապնակը. ներդրումներ, սփյուռքահայ բարերարների գործունեություն հայրենիքում,

կրթամշակութային ձեռնարկումներ, հայկական գրասենյակների գործունեության լուսաբանում, սփյուռքահայ ականավոր գործիչների այցելություններ Հայաստան:

«Ցեղասպանություն 100» հաղորդաշարը, առաջնորդվելով «Հիշում եմ և պահանջում» կարգախոսի տրամաբանությամբ, տարբեր խորագրերի միջոցով անդրադառնում է Ցեղասպանության տարիների պատմական իրադարձություններին՝ առանցքում պահելով հայ դիվանագիտության ձեռքբերումները Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացում:

«Թուրքական մամուլի էջերից» հաղորդաշարի հեղինակը թուրքական մամուլից («Հուրիյեթ», «Սաբահ», «Սթար», «Վաթան», «Թարաֆ», «Թուրքիյե», «Յենի Ակիթ», «Յենի Չաա», «Զաման» և այլն) առանձնացնում և հայերեն է թարգմանում Հայկական հարցի վերաբերյալ նյութեր, ինչպես նաև նյութեր, որոնք անուղղակիորեն առնչվում են Հայաստանին կամ կարևոր են Հայաստանի համար:

«Հարյուր տարվա լռություն» հաղորդաշարի նպատակն է գտնել և հանրությանը ճանաչելի դարձնել հայ, թուրք և այլ ազգերի ներկայացուցիչների, ովքեր խիզախում են երկխոսել միմյանց հետ ցավոտ խնդիրների շուրջ: Հաղորդումների ընթացքում պարբերաբար ներկայացվել են Թուրքիայի հասարակության առավել դեմոկրատ հատվածը ներկայացնող թուրք հասարակական գործիչների և մտավորականների կարծիքները: Հաղորդաշարը անդրադարձել է Հայոց ցեղասպանության ճանաչմանն առնչվող նախաձեռնություններին: Ռադիոհաղորդումները տեսաշարով տեղադրվում են www.youtube.com-ում՝ **«Հարյուր տարվա լռություն»** անվանումով:

<u>Մշակութային և պատմական հաղորդումներ</u>

Մշակութային հաղորդումերն ընդգրկում են հանրապետության և համաշխարհային մշակութային դաշտը բոլոր շերտերով: Ռադիոլրագրության բազմազան ժանրերով (հարցազրույց, դիմանկար, ռադիոկոմպոզիցիա և այլն) պատրաստվող հաղորդումները՝ **«Վերնատուն», «Մեկ դերասանի թատրոն», «Մեր ձայնադարանի ֆոնդից», «Գրական հանդիպումները», «Պոեզիա», «Նրանք ապրում են մեզ հետ», «Ասույթներ», «Առածանի», «Գիրք ճանապարհի»** անդրադարձել են անցյալի և ներկայիս մշակութային բարձր արժեքներին ու ճանաչված արվեստագետներին, վեր հանել դաշտում առկա խնդիրները, որոնք միտված են օգնելու ձևավորվող մշակութային քաղաքականությանը: Մշակութային հաղորդումները տարվա ընթացքում ընդգրկել են հայ ժողովրդի երևելիների հոբելյանները՝ երիտասարդ ունկնդրին ճանաչելի դարձնելով այն մտավորականներին ու

արվեստագետներին, որոնց ստեղծածը հուսալի հենարան է կյանք մտնող սերունդների համար:

«Ժամանակի վկան» հաղորդաշարը պարբերաբար անդրադարձել է անցյալ և ներկա պատմական իրադարձություններին, ներկայացրել պատմական և հայագիտական, ուսումնասիրություններ, նոր տեսակետներ և բացահայտումներ:

«Ռադիոթատրոն»-ը ունկնդրին է ներկայացրել ռադիոյի ֆոնդում պահպանվող հայ դասական և ժամանակակից գրողների, համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների ձայնագրությունները: 2014 թվականին Հանրային ռադիոընկերությունը ձայնագրել է չորս նոր ռադիոբեմադրություն **(Հ.Քոչարի «Կարոտ», Ֆ.Բախչինյանի «Մտորումներ Աթաթուրքի սենյակում», Ա.Հովհաննիսյանի «Ճակատագրով սիրահարվածները», Ռ.Դավոյանի «Ծովինար»**):

«Հայաստանը մեր տունն է» հաղորդումը պարբերաբար ներկայացրել է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքը:

<u>Երիտասարդական հաղորդումներ</u>

«Լյուն-Սե»-ն ամենօրյա հաղորդաշար է, որը ներկայացնում է Հայաստանի, Արցախի և արտասահմանի երիտասարդական անցուդարձը: Տարվա ընթացքում լուսաբանվել են կրթական, բնապահպանական, մարզական ոլորտների խնդիրները, պարբերաբար անդրադարձ է եղել մարզերում ապրող երիտասարդությանը հուզող խնդիրներին, ներկայացվել են արտասահմանում ապրող հայ երիտասարդները: «Լյուն-Սե»-ի լավագույն ռադիոհաղորդումները երկլեզու՝ հայերեն և անգլերեն, տեղադրվում են Եվրոպական հեռարձակողների միության (EBU) հետ համատեղ ստեղծված միջազգային լրատվական www.lyunse.com կայքում, որում կազմակերպվում են երիտասարդական ֆորումներ Եվրոպական ընտանիքի բոլոր երկրների երիտասարդական ռադիոկայանների ու ծրագրերի հետ: «Լյուն-Սե»-ի ստեղծագործական խումբը պատրաստում և համացանցում տարածում է փոքրիկ տեսանյութեր, որոնք ներկայացնում են այս կամ այն իրադարձության ամենահետաքրքիր դրվագները՝ միևնույն ժամանակ առաջարկելով լսել տվյալ միջոցառման ռադիոհաղորդման ընդարձակ տարբերակը:

«Ապրելու բանաձև» խորագրով հայրենասիրական, պատմական և դաստիարակչական ռադիոպանթեոնը մեծարանք և խոնարհում է Արցախյան ազատամարտում հերոսացած հայ քաջորդիների:

Մանկապատանեկան հաղորդումներ

Մանկապատանեկան հաղորդումները (**«Զարթուցիչ», «Հայ թեք», «Մեկնարկ», «Երեք ույու չորս», «Կար-չկար», «Պստիկաշեն»**) ուղղորդված են տարբեր տարիքային խմբերի՝ ամենափոքրերից մինչև պատանեկան: Կրթադաստիարակչական և տեղեկատվական գործառույթների շնորհիվ խմբագրությունը ձգտել է բավարարել երեխաների ինֆորմացիոն և կրթական հետաքրքրասիրությունը: Յուրաքանչյուր կիրակի եթեր է հեռարձակվել մանկական ռադիոթատրոն:

Կրթական և հայոց լեզվի հաղորդումներ

Հանրային ռադիոընկերությունն իր գործունեությամբ, հայերենի նկատմամբ հոգատար և հարգալից վերաբերմունքով վստահաբար ապացուցում է, որ կարելի է գրագետ և կիրթ հայերենով եթերում լինել ժամանակակից ու հետաքրքիր: **«Մենք և մեր բառերը»** և **«Խոսենք հայերեն»** ամենօրյա հաղորդումները մեր ունկնդիրներին ծանոթացնում են մայրենի լեզվի բառաշարի ծագումնաբանությանը, բառակազմությանը, քերականական կանոններին, օգնում հնարավորինս անաղարտ պահել մայրենին:

Ժամանցային հաղորդումներ

«Խելք խելքի»-ն ինտելեկտուալ, ուսուցողական և ժամանցային հաղորդում է՝ միտված երիտասարդների շրջանում գիտելիքի, իմացության և տրամաբանության զարգացմանը:

«Կեսգիշերից առաջ»-ը ժամանցային հաղորդում է, որը պարունակում է պատմամշակութային և հոգևոր ակնարկներ, հումորային և զվարճալի պատմություններ, հետաքրքիր հարցազրույցներ և այդ ամենը՝ համեմված տարբեր ոճի երաժշտությամբ:

Հոգևոր հաղորդումներ

«Ավետիս», «Շողակն Արարատյան», «Մանանա» հոգևոր հաղորդումները պատրաստվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան թեմի դիվանի հետ համագործակցությամբ: Հաղորդումների գլխավոր նպատակն է ծանոթացնել հայ եկեղեցու պատմությանը, եկեղեցական ծեսերին և տոնակատարություններին: Ռադիոունկնդիրները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու հոգևոր կյանքին ու խոսքին: Հոգևոր հաղորդումներին մասնակցել են հոգևորականներ, հոգեբաններ և ազգագրագետներ:

Երաժշտական հաղորդումներ

Երաժշտական հաղորդումների խմբագրությունը ունկնդրին մատուցել է հայկական, ժողովրդական, գուսանական, ժամանակակից և դասական, բազմաժանր ու բազմաոճ երաժշտական ստեղծագործություններ՝ ներկայացնելով հայ մեծանուն կոմպոզիտորների արժեքավոր ստեղծագործությունները: Կազմակերպվել են ժամանակակից երաժշտական մշակույթի հիմնահարցերի պրոֆեսիոնալ քննարկումներ՝ մտավորականների, կոմպոզիտորների, երգիչների և բնագավառի հիմնահարցերով մտահոգ մասնագետների մասնակցությամբ: Մեծ լսարան են արձանագրել **«Մի գավաթ սուրճ Ալիսայի հետ...», «Էտյուդներ», «Կամերտոն», «Երաժշտությունն ու մենք», «Արմատներ»** հաղորդումները: Հաղորդացանցի ամբողջական նկարագիրն առավել հայեցի դարձնելու համար հաղորդումների երաժշտական ձևավորման նախապատվությունը տրվել է հայկական մեղեդիներին:

Օգտագործելով Հանրային ռադիոյի ֆոնդում պահպանված բացառիկ ձայնագրությունները՝ պատրաստվում է **«Գանձարան»** հաղորդաշարը:

Հանրային ռադիոընկերության կազմում են գործում չորս երաժշտական կոլեկտիվները. **Արամ Մերանգուլյանի անվան** ժողովրդական գործիքների անսամբլը, **«Սայաթ Նովա»** աշուղական երգի անսամբլը, **«Արևիկ»** մանկապատանեկան անսամբլը, **Էստրադային սիմֆոնիկ** նվագախումբը:

«Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո»)

Հանրային ռադիոընկերության «Երկրորդ ծրագիր»-ը («Իմ ռադիո»-ն) միտված է մատուցելու բազմաժանր ու բազմաոճ երաժշտական, ժամանցային, հետաքրքիր ծրագրեր երիտասարդների համար, որը ներկայացնում է անցյալի մեծ վարպետների, ժամանակակից հայ և օտարազգի կատարողների լավագույն ստեղծագործությունները:

ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի համար պատրաստվող «Երևանի ձայն» հաղորդումներ

2014 թվականի ընթացքում «Երևանի ձայն»-ի հաղորդումները պատրաստվել են 13 լեզուներով: Հաղորդումներն օտարներին և աշխարհասփյուռ հայությանն են ներկայացրել հայաստանյան իրադարձությունները, ծանոթացրել Հայաստանի պատմությանը, արծարծել Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը, Հայ դատին և ցեղասպանության ճանաչմանը վերաբերող հարցեր: Արտասահմանի համար պատրաստվող օրվա բոլոր հաղորդումների

ձայնագրությունները և տեքստերը տեղադրվում են Հանրային ռադիոընկերության www.armradio.info կայքէջում, ինչը ունկնդրին հնարավորություն է ընձեռում հաղորդումները կարդալ ու լսել օրվա ցանկացած ժամի: Հաղորդումներից 8-ը՝ պարսկերեն, եզդիերեն, քրդերեն, ասորերեն, հունարեն, ադրբեջաներեն, թուրքերեն և արաբերեն, նաև հեռարձակվում են Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում, իսկ 5-ը՝ ռուսերեն, ֆրանսերեն, վրացերեն, գերմաներեն և իսպաներեն, տեղադրվում են միայն կայքէջում:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզուներով (եզդիերեն՝ 30 րոպե, ասորերեն՝ 15 րոպե, քրդերեն՝ 30 րոպե, հունարեն՝ 15 րոպե) հաղորդումներն ամեն օր հեռարձակվում են նաև Հայաստանի տարածքում:

<u>Ռադիոհաղորդումների հեռարձակում</u>

2014 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվել են սահմանված որակական և տեխնիկական չափանիշներին համապատասխան: «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվել է ՀՀ ողջ տարածքում օրական 24 ժամ՝ գերկարճ տիրույթի հաճախականություններով (Երևանում՝ 107.7 Մhg): «Իմ ռադիո»-ն հեռարձակվել է Երևանում և Երևանի հարակից շրջաններում օրական 24 ժամ՝103.8 Մhg հաճախականությամբ:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումները հեռարձակվել են կարճ ալիքով և գերկարճ տիրույթի հաճախականությունով:

Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում հաղորդումները 8 լեզուներով հեռարձակվել են միջին և կարճ ալիքներով:

ՀՀ Ազգային ժողովի դռնբաց նիստերը ուղիղ եթերով հեռարձակվել են գերկարճ 69.7 Մhg հաճախականությունով:

Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Ռադիո» և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով, ինչպես նաև Հանրային ռադիոընկերության սեփական տեխնիկական միջոցներով:

Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվել է նաև առցանց՝ www.armradio.am կայքէջով:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հանրային ռադիոընկերությունը 2014 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից, եթերաժամանակի տրամադրումից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման, ինչպես նաև շենքի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հանրային ռադիոընկերությանը հատկացվել է՝

- 08.03.01.03 «Ռադիո ծառայություններ» ծրագրով՝ 666,671.7 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),
- 08.03.01.12 ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում» ծրագրով՝ 50,000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

2014 թվականին Հանրային ռադիոընկերության այլ աղբյուրներից ստացված փաստացի եկամուտները կազմել են 40,619.0 հազ. դրամ (առանց ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտների):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության կողմից 2014 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 7

2014 թվականի Հանրային ռադիոընկերության եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	Ընթացիկ դրամաշնորհ	666,672
2	Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	80,491
3	Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում՝	44,375
3.1	*Առևտրային գովազդ*	*18,050*
3.2	*Վարձավճարներ*	*16,716*
3.3	*Այլ եկամուտներ*	*9,609*
Ընդամենը		**791,538**

Աղյուսակ 7-ի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված կապիտալ դրամաշնորհի

միջոցներով ձեռք բերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2014 թվականին Հանրային ռադիոընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության 2014 թվականի գործունեության ընթացքում կատարված փաստացի ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 8

2014 թվականի Հանրային ռադիոընկերության ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	451,375
2	Հեռարձակման ծախսեր	115,377
3	Մաշվածք և ամորտիզացիա	95,389
4	Այլ ծախսեր	147,306
Ընդամենը		**809,447**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 55.8%-ը և ներառել է հաստիքային աշխատողների և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 14.3%-ը և ներառել են ՀՀ տարածքում և արտասահմանում հեռարձակման, ինչպես նաև ինտերնետային առցանց հեռարձակման ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 18.2%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, արտագերատեսչական պահպանության, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, աուդիտի, գործուղման ծախսերը, հարկերը և տուրքերը (ներառյալ շահութահարկի գծով փոխհատուցումը), ինչպես նաև այլ ֆինանսական ծախսերը:

Այսպիսով, 2014 թվականին Հանրային ռադիոընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ վնասը կազմել է 17,909.0 հազ. դրամ: Վնասի առաջացումը հիմնականում պայմանավորված է անկախ գնահատողի կողմից

Հանրային ռադիոընկերության շենքերի և հողամասերի վերագնահատմամբ, որի արդյունքում առաջացել է արժեզրկումից ծախս՝ 66,629.0 հազ. դրամ գումարի չափով:

2014 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 116,637.0 հազ. դրամ:

2013 թվականի գործունեության արդյունքներով Հանրային ռադիոընկերությունը 2014 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարել 1,907.0 հազ. դրամ շահութաբաժին:

2014 թվականին ձեռք են բերվել 29,141.9 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ համակարգչային տեխնիկա, գրասենյակային գույք, անվտանգության համակարգ, ինչպես նաև իրականացվել է 175,649.0 հազ. դրամի (ներառյալ ԱԱՀ) կապիտալ նորոգման աշխատանքներ:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեից շենքի հիմնանորոգման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցները Հանրային ռադիոընկերությունը ուղղել է 2013 թվականի ընթացքում իրականացված հիմնանորոգման աշխատանքների փոխհատուցմանը:

6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2014 թվականին «Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական հեռարձակել է 18 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ:

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հաղորդումներ պատրաստել և հեռարձակել՝ ներկայացնելով ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը, երկրի արդի մշակութային կյանքը՝ թիրախ ունենալով ազգային ու համամարդկային հոգևոր բարոյական արժեքների քարոզչությունը:

Հեռուստահաղորդումների պատրաստում

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերությունը

պատրաստել և հեռարձակել է 6,591 ժամ ընդհանուր ծավալով հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

Աղյուսակ 9

2014 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղություններ	Հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	Մշակութային լրատվություն	385
2	Մշակութային հաղորդումներ	1,825
3	Հոգևոր հաղորդումներ	965
4	Գիտահանրամատչելի և ուսումնական, վավերագրական կինոնկարներ	870
5	Երաժշտական ծրագրեր և համերգներ	1,025
6	Մանկական հաղորդումներ	795
7	Ուսումնական և այլ հաղորդումներ	726
Ընդամենը		**6,591**

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են նաև Գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները (%)



Մշակութային լրատվություն

Մշակութային լրատվության հաղորդումներից պատրաստվել և հեռարձակվել են **«Մշակութային ազդագիր»** և **«Ձայնագիր»** հաղորդումները, որոնք իրենց հիմնական թողարկումներում և հավելվածներում ներկայացրել են բազմաժանր ծրագրեր հեռուստադիտողների տարբեր տարիքային խմբերի համար: «Ձայնագիր» հեռուստահաղորդաշարը լուսաբանել է Հայաստանի երաժշտական կյանքը, ներկայացրել երևանյան համերգասրահներում կազմակերպված ժողովրդական, աշուղական, ակադեմիական և ժամանակակից երաժշտության նշանակալից միջոցառումները: 2014 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են Հայաստանում կայացած մի շարք երաժշտական փառատոններ՝ «Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոն, «Երևանյան» միջազգային փառատոնը, «Արամ Խաչատրյան» միջազգային փառատոնը, «Վերադարձ» դասական երաժշտության փառատոնը, «Վերածնունդ» փառատոնը, «Նոր անուններ» փառատոնը, ջազ և ռոք փառատոնները: Ներկայացվել են նաև միջազգային հռչակ վայելող նվագախմբերի, դիրիժորների և կատարողների մասնակցությամբ, հայկական և եվրոպական հոգևոր երաժշտության, ազգային երաժշտության, ավանդական երգ ու պարի համույթների, աշուղական երաժշտական համույթների համերգներ:

«Մշակութային ազդագիր» ծրագիրն իր լսարանին ներկայացրել է հանրապետության պատկերասրահներում, ցուցասրահներում ու թանգարաններում անցկացվող միջոցառումները, լուսաբանել մշակույթի ոլորտում վաստակ ունեցող գործիչների գործունեությունը:

2014 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են հայաստանյան թատրոնների պրեմիերաներն ու խաղացանկերը: «Մշակութային ազդագիր»-ը հիմնական ու հատուկ թողարկումներով թատերասեր հանդիսատեսին հնարավորություն է տվել հետևել Հայաստանում կազմակերպված բոլոր կինո և թատերական փառատոններին՝ «Ոսկե ծիրան» երևանյան միջազգային փառատոն, «Բրիտանական ֆիլմերի» փառատոն, «Գերմանական ֆիլմերի» փառատոն, «Արգենտինական ֆիլմերի» փառատոն, «Կին» միջազգային կինոփառատոն, «Թատրոն իքս» փառատոն, «Արտֆեստ» հանրապետական երիտասարդական բաց փառատոն, «Ռեանիմանիա» միջազգային անիմացիոն փառատոն:

«Մշակութային ազդագիրը»-ը հիմնական ու հատուկ թողարկումներում ներկայացրել է նաև փորձարարական արվեստն ու երիտասարդ ստեղծագործողներին և անդրադարձել

գրքի ու գրահրատարակչության ոլորտի խնդիրներին ու կազմակերպված միջոցառումներին:

«Թեմա» - մշակութային թեմաներով տաղավարային հաղորդաշար 45 րոպե տևողությամբ, շաբաթական պատրաստվում է մեկ հաղորդում:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը համագործակցում է «Շողակաթ» հեռուստաընկերության հետ, որի պատրաստած հոգևոր-մշակութային և հոգևոր-եկեղեցական հաղորդումները համահունչ են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության ծրագրային քաղաքականության հետ: 2014 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը «Շողակաթ» հեռուստաընկերության հետ համագործակցության արդյունքում իր եթերով հեռարձակել է մի շարք հաղորդումներ, մասնավորապես՝

<u>Մշակութային հաղորդումներ</u>

- **«Գիրք ճանապարհի»** - հայ գրականության պատմության մեջ շրջադարձային արժեք ունեցող գրական գործերի մասին,
- **«Հանրագիտարան»** - հայ և համաշխարհային գիտության ու արվեստի մեծերի մասին տեսահանրագիտարան,
- **«Կադրից դուրս»** - հայ և համաշխարհային կինոգործիչների մասին պատմող հաղորդաշար,
- **«Թանգարաններ»** - Հայաստանում գործող թանգարանները ներկայացնող հաղորդաշար,
- **«Հայտնի և անհայտ կինո»** - հանրահայտ ռեժիսորների կյանքն ու գործունեությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Նկարիչ»** - հայ ժամանակակից նկարիչների մասին պատմող հաղորդաշար,
- **«Փորձասենյակ»** - Հայաստանում գործող երաժշտական խմբերի մասին պատմող հաղորդաշար,
- **«Ներուժ»** - Հայորդաց Տների գործունեությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Երկու ընկեր»** - ժամանակակից հայ մտավորականին ներկայացնում են իրենց ընկերները,
- **«Սիրելով... »** - մշակութային հաղորդաշար (սիրելով գիրքը, պարը, երաժշտությունը և այլն),

- **«Հանիրավի մոռացվածները»** - հայ մշակույթի մոռացված գործիչների մասին պատմող վավերագրական տեսաֆիլմ:

Հոգևոր հաղորդումներ

- **«Եկեղեցական կյանք»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական կյանքի լուսաբանում,
- **«Հիսուսի հրաշքներն ու բժշկումները»** - անիմացիոն հաղորդաշար, որում հայ և եվրոպական մանրանկարչության օգտագործմամբ ներկայացվում են Նոր Կտակարանում նկարագրված Տերունական հրաշքները,
- **«Հարցեր քահանային»** - քահանան պատասխանում է հեռուստադիտողների հարցերին,
- **«Հայրս քահանա է»** - քահանայի մասին պատմում են ընտանիքի անդամները,
- **«Աստված իմ մեջ»** - գիտնականները, արվեստագետները և մշակույթի այլ գործիչները խոսում են հավատքի և հոգևորի մասին,
- **«Դեպի եկեղեցի»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատացյալները վկայում են իրենց հավատքը,
- **«Հայ Առաքելական Եկեղեցու խորհուրդները»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Ծեսերի խորհուրդն ու մեկնությունը,
- **«Խորհուրդ խորին»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Պատարագի մեկնություն,
- **«Հավատի կյանք»** - ուխտի օր ունեցող եկեղեցիների համայնքային կյանքը,
- **«Քահանայի հուշապատում»** - ավագ սերնդի քահանաների հուշերը:

Մանկական հաղորդումներ

- **«Հին ու նոր հեքիաթներ»** - անիմացիոն մանկական հաղորդաշար՝ իրիկնային հեքիաթ,
- **«Ճամփաներ»** - մանկապատանեկան դաստիարակչական հաղորդաշար,
- **«Մանուկ դպիրներ»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում ծառայող մանուկների մասին,
- **«Պատումիկներ Աստվածաշնչից»** - անիմացիոն հաղորդաշար, որը մանուկների համար ներկայացնում է Աստվածաշնչյան առանձին պատմություններ,
- **«Ինչն ինչոց է ըստ Պիստակի»** - անիմացիոն մանկական հանրագիտարան,

- **«ՕԳԳ»** - մշակութային տարբեր խմբակների գործունեությունը ներկայացնող մանկապատանեկան հաղորդաշար,

<u>Ուսումնական և այլ հաղորդումներ</u>

- **«Ազգապատում»** - Հայ ժողովրդի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Առաքինություններ»** - ներկայացնում է բարոյական արժեքների դերը մարդու կյանքում,
- **«Ավետարանի գործող անձինք»** - անիմացիոն ճանաչողական հաղորդաշար, որում ներկայացվում են Նոր Կտակարանի կերպարները,
- **«Նվիրյալ անձեր»** - ներկայացնում է հայ ժամանակակից գիտության և մշակույթի երևելիների կյանքն ու գործունեությունը,
- **«Հայը»** - հայ մշակույթի երևելիները՝ հայերի մասին,
- **«Երրորդ հազարամյակ»** - հասարակական գործիչներն ու գիտնականները քննարկում են մշակութաբանական թեմաներ,
- **«Դեպի տուն»** - հայրենիք վերադարձած հայերը պատմում են իրենց գերդաստանի պատմությունը և խոսում հայրենիք վերադառնալու պատճառների մասին,
- **«Օր վեցերորդ»** - հոգևորականը մշակույթի և հասարակական գործիչների հետ զրուցում է օրվա հրատապ թեմաներով:

<u>Երաժշտական ծրագրեր և համերգներ</u>

Երևանի տարբեր համերգասրահներում տեսագրվել և հեռարձակվել են մի շարք համերգային ծրագրեր՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի մասնակցությամբ:

<u>Հեռուստահաղորդումների հեռարձակում</u>

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը 2014 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի հաշվին: Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը այլ աղբյուրներից, մասնավորապես՝ առևտրային գովազդից և հովանավորությունից դրամական մուտքեր չի ունեցել՝ հաշվի առնելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3.1 կետի պահանջը, համաձայն որի արգելվում է գովազդի հեռարձակումը Հանրային հեռուստառադիոընկերության հոգևոր-մշակութային ուղղվածության հեռուստաալիքի կողմից:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.10 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է 147,849.1 հազ. դրամ:

2014 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը պետական բյուջեից ստացված դրամաշնորհն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության 2014 թվականի գործունեության ընթացքում կատարված փաստացի ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 10

2014 թվականի Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության ծախսերն՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	74,320
2	Հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսեր	22,014
3	Հեռարձակման ծախսեր	49,418
4	Այլ ծախսեր	2,097
Ընդամենը		**147,849**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 50.3%-ը և ներառել է հաստիքային աշխատողների և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 14.9%-ը և ներառել են հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 33.4%-ը, իսկ այլ ծախսերը՝ 1.4%:

2014 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 17,454.0 հազ. դրամ:

7. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

2014 թվականին «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲ ընկերությունը շարունակել է Շիրակի մարզում հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական միջինը 8.7 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ և 24 ժամ ռադիոհաղորդումներ:

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստում

Շիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2014 թվականի ընթացքում հեռարձակվել են ընդհանուր առմամբ 3,189 ժամ հեռուստահաղորդումներ և 8,760 ժամ ռադիոհաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

Աղյուսակ 11

2014 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հեռուստառադիոհաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղություններ	Հեռարձակված հեռուստահաղորդումների ծավալները (ժամ)	Հեռարձակված ռադիոհաղորդումների ծավալները (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	-	496
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	37	-
3	Մշակութային	69	144
4	Մարզական	159	439
5	Երաժշտական, ժամանցային	2,009	7,281
6	Այլ հաղորդումներ	915	400
Ընդամենը		**3,189**	**8,760**

Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են նաև Գծապատկեր 5-ում և Գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 5. 2014 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հեռուստահաղորդումների փաստացի ծավալները (%)



Գծապատկեր 6. 2014 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված ռադիոհաղորդումների փաստացի ծավալները (%)



Հեռուստահաղորդումներ

Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներ

Լրատվական, լրատվական-վերլուծական ուղղվածությամբ հեռարձակվել են լրատվական տարբեր ակնարկներ՝ մարզում առկա խնդիրների և իրադարձությունների վերաբերյալ:

Քաղաքական, տնտեսական և հասարակական հաղորդումներ

Քաղաքական, տնտեսական և հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդումներից հեռուստադիտողին են ներկայացվել **«Փակագիծ»** հաղորդաշարը, որի շրջանակներում հրավիրված քաղաքական գործիչների, այս կամ այն ոլորտի պատասխանատուների հետ անդրադարձ է կատարվել մարզին առնչվող տարբեր խնդիրներին, ձեռքբերումներին, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, իրավական, առողջապահական և այլ ոլորտներում առկա հիմնախնդիրներին:

Մշակութային հաղորդումներ

«Ես և դու» հաղորդաշարը ներկայացնում է ժամանակակից մշակութային գործիչների, արվեստագետների ստեղծագործությունները, ինչպես նաև տարբեր մշակութային իրադարձություններ, որոնք առնչվել են Գյումրի քաղաքին և Շիրակի մարզին:

«Դեպի տաճար» հոգևոր-մշակութային հաղորդումը ներկայացնում է մեր դավանանքը, առաքելական եկեղեցու ծեսերը, տոները, խորհուրդները, սրբերի վարքերը, աստվածաշնչյան մեկնությունները: Հաղորդաշարի ընթացքում տրվում են պատմական տեղեկություններ եկեղեցիների կառուցման, նրանց շուրջ տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև լինում են հարցազրույցներ հոգևորականների և եկեղեցուն մոտ կանգնած մարդկանց հետ:

Մարզական հաղորդումներ

Մարզական հաղորդումներից հեռուստադիտողին է ներկայացվել **«Շիրակ աշխարհի սպորտ»**-ը, որն անդրադառնում է մարզում և հանրապետության տարածքում տեղի ունեցած կարևորագույն մարզական իրադարձություններին:

«Ֆուտբոլային կրքեր» հաղորդաշարը ներկայացնում է աշխարհում կարևորագույն և հիշարժան ֆուտբոլային իրադարձությունները: Հեռարձակվել են «Շիրակ» ֆուտբոլային

թիմի բոլոր խաղերը, Իսպանիայի Պրեմիեր լիգայի և Գերմանիայի ֆուտբոլային առաջնության խաղերը:

Երաժշտական և ժամանցային հաղորդումներ

Շիրակի հանրային հեռուստառադիոյի եթերում տեղ են գտել ազգագրական երգ ու պար, գեղարվեստական ֆիլմեր, հեռուստատեսային սերիալներ, փաստագրական ֆիլմեր, մուլտֆիլմեր, տեսահոլովակներ, հայ և արտասահմանյան երգիչ-երգչուհիների երաժշտական համերգային ծրագրեր:

Այլ հաղորդումներ

Այլ հաղորդումները առնչվում են մանկապատանեկան, գիտական, կրթական, ինչպես նաև հայոց լեզվին և պատմությանը վերաբերող թեմաներին: Մասնավորապես հեռարձակվել են Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի հետ համատեղ պատրաստվող երիտասարդության հարցերին առնչվող հաղորդումներ, ազատամարտիկների, անվանի մարդկանց մասին պատմող ակնարկներ, հայ ժողովրդի պատմությանը և ազատամարտին վերաբերող հայրենական արտադրության հաղորդումներ, որոնք տրամադրվել են այլ հեռուստաընկերությունների կողմից:

Ռադիոհաղորդումներ

Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներ

Լրատվական, լրատվական-վերլուծական ռադիոհաղորդումներից են **«Օրագիծ»** լրատվական և **«Հետագիծ»** լրատվական-վերլուծական հաղորդումները:

Մշակութային հաղորդումներ

Մշակութային հաղորդումներից 2014 թվականին պատրաստվել և հեռարձակվել է **«Դեպի տաճար»** ռադիոհաղորդաշարը, որն անդրադառնում է Հայ Առաքելական Եկեղեցուն, տրվում են աստվածաշնչյան մեկնություններ, ինչպես նաև անդրադարձ է կատարվում եկեղեցական տոնացույցին:

Մարզական հաղորդումներ

Մարզական հաղորդումներն եթեր են հեռարձակվում օրական 2 անգամ՝ ներկայացնելով սպորտային լուրեր և իրադարձություններ մարզական կյանքից:

Երաժշտական-ժամանցային հաղորդումներ

Երաժշտական-ժամանցային հաղորդումներից ռադիոունկնդիրներին է ներկայացվել **«Առավոտը միասին», «Կանանց աշխարհում», «Մինչ կեսգիշեր»** և **«Երաժշտական խճանկար»** ռադիոծրագրերը, ինչպես նաև ռադիոյի եթերում հնչել է հայկական, ռուսական և արտասահմանյան երաժշտություն:

Այլ հաղորդումներ

Այլ հաղորդումների թվում են եղել ռադիոթատրոնը, ասմունքը, տոներին նվիրված հաղորդումները:

Հեռուստահողորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակում

Շիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստահաղորդումների հեռարձակումն իրականացնում է Գյումրի քաղաքում և հարակից տարածքներում՝ դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով, և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով, իսկ ռադիոհաղորդումների հեռարձակումը իրականացնում է Գյումրի քաղաքում FM տիրույթում՝ 102.5 Մhg հաճախականությամբ: Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Շիրակի հանրային հեռուստառադիոն 2014 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից, հովանավորությունից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման, ինչպես նաև տեխնիկական վերազինման աշխատանքների ֆինանսավորման նպատակով Շիրակի հանրային հեռուստառադիոյին «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հատկացվել է՝

- 08.03.01.04 «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով՝ 27,266.4 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),

- 08.03.01.14 ««Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում» ծրագրով՝ 2,030.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

2014 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի այլ աղբյուրներից ստացված փաստացի եկամուտները կազմել են 4,017.0 հազ. դրամ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից 2014 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 12

2014 թվականի Շիրակի հանրային հեռուստառադիոյի եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	Ընթացիկ դրամաշնորհ	27,266
2	Առևտրային եկամուտներ, այդ թվում՝	4,017
2.1	*Առևտրային գովազդ*	*2,768*
2.2	*Վճարովի եթերաժամանակ*	*1,249*
3	Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	626
Ընդամենը		**31,909**

Աղյուսակ 12-ի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից և Գյումրու Քաղաքապետարանից ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցներով ձեռք բերված ակտիվների գծով եկամուտները:

2014 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Շիրակի հանրային հեռուստառադիոյի 2014 թվականի գործունեության ընթացքում կատարված փաստացի ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 13

2014 թվականի Շիրակի հանրային հեռուստառադիոյի ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	19,989
2	Հեռուստառադիոհաղորդումների արտադրության ծախսեր	2,466
3	Հեռարձակման ծախսեր	2,478
4	Այլ ծախսեր	6,838
Ընդամենը		**31,771**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 62.9%-ը և ներառել է հաստիքային աշխատակիցների աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռուստառադիոհաղորդումների արտադրության ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 7.8%-ը և հիմնականում ներառել են հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 7.8% և ներառել են Շիրակի մարզում հեռուստահաղորդումների և Գյումրի քաղաքում ռադիոհաղորդումների հեռարձակման ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 21.5% և ներառել են գրասենյակային ապրանքների, արտադրական նյութերի ձեռքբերման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, աուդիտի, գործուղման, հարկերի և տուրքերի, տրանսպորտի և տեխնիկայի վարձակալության գծով ծախսերը, հիմնական միջոցների մաշվածքը և այլն:

2014 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 7,373.0 հազ. դրամ:

2014 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն ՀՀ կառավարության 20.05.2010թ. N694-Ա որոշման համաձայն՝ Գյումրու Քաղաքապետարանից ստացված միջոցների հաշվին իրականացրել է 3,822.0 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքներ:

2014 թվականին ձեռք են բերվել 3,091.6 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ համակարգչային և հեռուստատեսային տեխնիկա և այլ հիմնական միջոցներ, որից 2,030.0 հազ. դրամը ֆինանսավորվել է 2014 թվականին ՀՀ պետական բյուջեից տեխնիկական վերազինման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցներով:

8. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ

2014 թվականին «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲ ընկերությունը շարունակել է ուսումնասիրել Հանրային հեռուստառադիոընկերության եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնն իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Սոցիոլոգիական հարցումներ կատարելու նպատակով «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.06 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրով Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 8,317.9 հազ. դրամ:

ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների շրջանակում Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը 2014 թվականին իրականացրել է 10 հետազոտություն: Եռամսյակային կտրվածքով իրականացվել են զանգվածային քանակական սոցիոլոգիական հետազոտություններ (հետազոտության մասնակիցների թիվը յուրաքանչյուր եռամսյակ կազմել է 1200 հարցվող), որոնք ուղղված են եղել բացահայտելու Հանրային հեռուստատեսության եթերային քաղաքականության վերաբերյալ հեռուստադիտողների ընկալումները և ակնկալիքները: Հետազոտությունները իրականացվել են ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ մարզերում: Սոցիոլոգիական հետազոտությունները իրականացվել են ընտրանքի կազմման պանելային մեթոդաբանությամբ, որը հնարավորություն է տալիս բացահայտել հետազոտությունների դիտարկվող միավորների փոփոխման դինամիկան: Հետազոտությունները հնարավորություն են տվել դուրս բերել եթերային քաղաքականության ձևային և բովանդակային փոփոխությունների վերաբերյալ հանրային արձագանքները, չափել հեռուստադիտողների բավարարվածության մակարդակը հեռուստաարտադրանքից և դուրս բերել գնահատականների փոփոխման դինամիկան՝ դրական և բացասական միտումները:

Նշված զանգվածային հետազոտություններին զուգահեռ իրականացվել են նաև 6 որակական հետազոտություններ՝ թիրախային խմբերի մասնակցությամբ: Որակական հարցումներն իրականացվել են կիսաստանդարտացված անկետավորման և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով: Ընտրվել են 5 հիմնական թիրախային խմբեր՝ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսուցիչներ, լրագրողներ և բլոգերներ: Յուրաքանչյուր թիրախային խմբի հետ քննարկվել է Հանրային

հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործունեությունը, հաղորդացանցի նկատմամբ բավարարվածությունը, առանձին հաղորդումների գրավիչ և վանող գործոնները, հաղորդումների բովանդակության վերաբերյալ ուղերձները: Որակական հետազոտություն է իրականացվել նաև պարզելու երիտասարդական և մանկական հաղորդումներից թիրախային խմբերի բավարարվածության մակարդակը, եթերում մանկական և երիտասարդական հաղորդումների ներկայացվածության չափի վերաբերյալ պատկերացումները և գնահատականները:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը 2014 թվականին, բացի ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհից, ստացել է նաև այլ եկամուտ՝ 11,477.0 հազ. դրամի չափով, որի հաշվին իրականացրել է հետևյալ հետազոտությունները՝ հայկական հեռուստատեսությունների հեռուստաարտադրանքի համեմատական, հեռուստահաղորդումների դիտելիության և բովանդակային նախընտրությունների գնահատում, արտաքին գովազդի շուկայի վերլուծություն և պարզաբանում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից 2014 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 14

2014 թվականի Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	Ընթացիկ դրամաշնորհ	8,318
2	Այլ եկամուտներ, այդ թվում՝	11,477
2.1	*Հետազոտություններ իրականացնելու համար*	*10,804*
2.2	*Այլ*	*673*
Ընդամենը		**19,795**

2014 թվականին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է իր կանոնադրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի 2014 թվականի գործունեության ընթացքում կատարված փաստացի ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 15

2014 թվականի Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	16,414
2	Այլ ծախսեր	3,305
	Ընդամենը	**19,719**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 83.2%-ը և ներառել է հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև հետազոտությունների իրականացման համար ներգրաված մասնագետների ծառայությունների ձեռքբերման ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 16.8%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների ձեռքբերման, ներկայացուցչական և գործուղման ծախսերը, հիմնական միջոցների մաշվածքը և այլ ծախսերը:

2014 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 4,802.0 հազ. դրամ:

2013 թվականի գործունեության արդյունքներով Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը ՀՀ պետական բյուջե է վճարել 664.0 հազ. դրամ շահութաբաժին:

2014 թվականին ձեռք են բերվել 1,794.0 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ համակարգչային տեխնիկա, հաշվապահական հաշվառման ծրագիր և այլ հիմնական միջոցներ, որից 1,081.6 հազ. դրամը ֆինանսավորվել է «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.06 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով:

9. «Մասս մեդիա» կրթական կենտրոն

2014 թվականին Հանրային հեռուստաընկերությունը և Հանրային ռադիոընկերությունը համատեղ ապահովել են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և Երևանի պետական համալսարանի հետ համատեղ ստեղծված «Մասս մեդիա» կրթական կենտրոնի բնականոն գործունեությունը: Կրթական կենտրոնի նպատակն է մեդիաարտադրության ոլորտի բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող

կադրերի շարունակական որակավորումը, որն էլ հետագայում կնպաստի Հանրային հեռուստառադիոընկերության ենթակայության տակ գտնվող ընկերություններում սահուն սերնդափոխությանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՋԱՂԻՆՅԱՆ